

**ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՑԵՐԸ ՓԱՐԻԶԻ
ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ (1919-1920 ԹԹ.)**

Ռոբերտ Թաթոյան

Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագրի մշակման և Հայաստանի սահմանների որոշման հետ կապված գործընթացների համատեքստում ուրույն տեղ են գրավում Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանում հայերի՝ այլ էթնիկական խմբերի նկատմամբ հարաբերակցության հարցերի արծարծումները: Տվյալ հարցերին անդրադարձել են և՛ միասնական հայկական պետության կազմավորման համար պայքար մղող հայկական պաշտոնական ու ոչ պաշտոնական տարբեր կառույցները, և՛ Արևմտյան Հայաստանի՝ նկատմամբ հայկական պահանջատիրության դեմ, ի թիվս այլ, նաև ժողովրդագրական փաստարկները շահարկող թուրքական իշխանությունները, և՛ Օսմանյան կայսրության հետագա ճակատագրի որոշման համար վիճակագրական տվյալների կարիք ունեցող Անտանտի պետությունները (դրանցից հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան): Հետպատերազմյան գործընթացներում խնդրո առարկա հարցերի շուրջ հայկական և թուրքական կողմերի ծավալած հեռակա բանավեճը կարելի է պատկերավոր բնութագրել որպես 1878-ից, այսինքն՝ Հայկական հարցի՝ միջազգային դիվանագիտական օրակարգ մտնելուց հետո ի հայտ եկած «վիճակագրական պատերազմի» փուլերից՝ «ճակատամարտերից» մեկը:

Ներկա հոդվածի շրջանակներում մենք կփորձենք ներկայացնել և վերլուծության ենթարկել Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանում հայերի՝ այլ էթնիկական խմբերի նկատմամբ հարաբերակցության վերաբերյալ Փարիզի հաշտության վեհաժողովին հայկական և թուրքական կողմերի ներկայացրած վիճակագրությունները, ինչպես նաև ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դիվանագիտության կողմից շրջանառության մեջ դրված տվյալները:

Փորձ կարվի նաև լուսաբանելու Հայաստանի սահմանագծման և Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի, Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական կազմի միջև կապը, քանի որ արևմտահայության թվաքանակի հաշվարկները որպես գործոն որոշակի ազդեցություն են ունեցել հետպատերազմյան

¹ «Արևմտյան Հայաստան» հասկացությունը այսուհետ, ըստ մեր նկատման, Օսմանյան կայսրության մոտավորապես այն տարածքն է, որին Առաջին աշխարհամարտից հետո տեսակապես հավակնում էր հայկական կողմը, այն է՝ Մեքսատիայի, Էրզրումի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի և Խարբերդի նահանգներ, Կիլիկիա (Ադանայի նահանգի Ադանայի, Ջերեզ-Բերեքեթի և Խոզանի գավառներ և Հալեպի նահանգի Մարաշի գավառ) և Տրապիզոնի նահանգի արևելյան հատված:

կարգավորման համատեքստում Հայաստանի Հանրապետության և Օսմանյան կայսրության միջև սահմանի որոշման հարցի շուրջ քննարկումներում:

1. Առաջին աշխարհամարտից հետո աշխարհի հետպատերազմյան կարգավորման սկզբունքները

1918 թ. հոկտեմբերի 30-ին Հունաստանի Լեմնոս կղզու Մուդրոսի նավահանգստում Օսմանյան կայսրության և Անտանտի անունից Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչների միջև կնքված զինադադարը վերջ դրեց Օսմանյան կայսրության մասնակցությանն Առաջին աշխարհամարտին: Երկրի հետագա ճակատագիրը որոշվելու էր 1919 թ. հունվարի 18-ին Փարիզում իր աշխատանքները սկսած հաշտության վեհաժողովում: Այդ առնչությամբ միջազգային քաղաքականության ակտիվ օրակարգում նորից հայտնվեց Հայկական հարցը, որը տվյալ շրջանում հատկապես արտահայտվեց միացյալ հայկական պետության մեջ Արևմտյան Հայաստանի տարածքների ընդգրկման և համապատասխանաբար՝ Հայաստանի արևմտյան սահմանների որոշման հարցի տեսքով:

Դեռևս 1918 թ. հունվարի 8-ին ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնը ԱՄՆ-ի կոնգրեսի և սենատի համատեղ նիստին իր ուղերձում ներկայացրել էր այն սկզբունքները, որոնք պետք է ընկած լինեին աշխարհի հետպատերազմյան կարգավորման հիմքում: Դրանք պատմության մեջ մտան «տասնչորս կետեր» անվան տակ: Այդ կետերից հատկապես տասներկուերորդը վերաբերում էր Օսմանյան կայսրությանը. «Ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական (այսինքն՝ թուրքաբնակ – Ռ.Թ.) մասերը պետք է ապահովված լինեն անվտանգ ինքնիշխանությամբ, սակայն այլ ազգությունները, որոնք ներկայումս գտնվում են թուրքական տիրապետության տակ, պետք է ապահովված լինեն կյանքի անվերապահ անվտանգությամբ և ինքնավար զարգացման կատարյալ անխափան հնարավորությամբ...»²: Ինչպես տեսնում ենք, Օսմանյան կայսրության և այդ թվում Արևմտյան Հայաստանի տարածքների պատկանելության հարցում գերակա սկզբունք հռչակվեց տվյալ տարածքի վրա բնակվող ժողովուրդների «ինքնավար զարգացման», այսինքն՝ ազգերի ինքնորոշման իրավունքը: Այդ սկզբունքը շեշտվում և զարգացում է ստանում Վ. Վիլսոնի՝ 1918 թ. փետրվարի 11-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի և Սենատի առջև արտասանած նոր ճառում, որի հիմնական դրույթներն էին՝ «ժողովուրդներն ու ազգերը չպետք է փոխանակման առարկա դառնան...», «...այս պատերազմին առնչվող յուրաքանչյուր տարածքային կարգավորում պետք է արվի ի շահ և հոգուտ տվյալ տարածքի բնակչության», «...բոլոր լավ հիմնավորված ազգային ձգտումները պետք է բավարարվեն հնարավորինս լիարժեք կերպով ...առանց անհամաձայնության և թշնամության նոր տարր ստեղծելու կամ հին տարրերը հավերժացնելու»³:

² Թարգմանությունը կատարվել է մեր կողմից ըստ անգլերեն տեքստի՝ Helmreich, Paul C., *From Paris to Sévres: The Partition of the Ottoman Empire at the Peace Conference of 1919–1920*, Ohio State University Press, Columbus, 1974, էջ 8:

³ Նույն տեղում:

Ըստ հայ ուսումնասիրող Լ. Շիրինյանի դիտարկման՝ խաղաղության վեհաժողովին ԱՄՆ-ի պատվիրակությանը հաջողվեց վերոնշյալ սկզբունքները կամ «Վիլսոնի վարդապետությունը» Անտանտի դաշնակիցներին դիտել տալ որպես բանակցությունների հիմք, այդ թվում նաև Օսմանյան կայսրության բաժանման և Հայաստանի արևմտյան սահմանների որոշման հարցում⁴: Դա հատկապես արտահայտվեց 1918 թ. նոյեմբերի 9-ին Ֆրանսիայի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների կողմից ընդունված համատեղ հայտարարության մեջ, որում մասնավորապես ասվում էր. «Նպատակը, որը նկատի ունեն Ֆրանսիան և Մեծ Բրիտանիան, պատերազմ վարելով Արևելքում, թուրքերի կողմից այսքան երկար ժամանակ ճնշված ժողովուրդների լիակատար և ամբողջական ազատագրումն է և տեղի բնակչության նախաձեռնությամբ և ազատ կամարտահայտության հիման վրա ազգային կառավարությունների և կառավարման մարմինների հաստատումը»⁵:

Դրանից ելնելով՝ կարևորություն ստացան և Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանների մշակման համատեքստում արժարժվեցին Մեծ եղեռնի նախօրյակին Արևմտյան Հայաստանի նահանգներում հայերի թվաքանակի, մահմեդական՝ թուրք և քուրդ բնակչության նկատմամբ հայերի տոկոսային հարաբերակցության խնդիրները:

Դրա հետ մեկտեղ նշենք, որ Օսմանյան կայսրության ճակատագրի որոշման պարագայում ժողովրդագրական գործոնը թեև կարևոր էր, սակայն ոչ առանցքային: Օսմանյան կայսրության հետ կապված տարածքային հարցերի, այդ թվում՝ հայկական տարածքների պատկանելության որոշման հարցում Դաշնակից պետությունները որպես առաջնորդվելու սկզբունք ընդունեցին ոչ միայն տվյալ տարածքներում առկա ժողովրդագրական վիճակը և դրանից բխող «ազգերի ինքնորոշման» իրավունքը, այլ նաև Թուրքիայի կողմից իր հպատակ ժողովուրդների նկատմամբ գործած չարաշահումները, իսկ Հայաստանի պարագայում՝ «սարսափելի կոտորածները»: Մասնավորապես Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության կողմից պատրաստված մի հուշագրում (շրջանառության մեջ է դրվել 1918 թ. նոյեմբերի 21-ին) նշվում էր. «Նպատակահարմար կլիներ Հայաստանի տարածքը ծավալել հնարավորինս լայն ընդգրկումով, այնպես որ սահմանից հյուսիս ներառվեն բոլոր տարածքները, որտեղ առկա է թուրքերի, հայերի և քրդերի խառը բնակչություն: Ազգաբնակչության բոլոր տարրերի իրավահավասարության սկզբունքը չի վիճարկվում: Մյուս կողմից, երկրի կառավարման իրավունքում այս տարրեր տարրերի համամասնական պահանջները դնելիս Հայաստանի դեպքում պետք է սահմանել, որ մահացածներն ու արքայազմները հաշվի առնվեն, և աշխարհի մյուս

⁴ Շիրինյան Լ., Վիլսոնյան նախագիծը և Թուրքիան, «21-րդ դար», № 4, 2008, էջ 100:

⁵ Անգլերեն տեքստը՝ “The object aimed at by France and Great Britain in prosecuting in the East the war let loose by the ambition of Germany is the complete and definite emancipation of the peoples so long oppressed by the Turks and the establishment of national governments and administrations deriving their authority from the initiative and free choice of the indigenous populations.” Թարգմանվել է մեր կողմից ըստ United States Department of State, *Papers relating to the foreign relations of the United States, The Paris Peace Conference, 1919*, Volume V, U.S. Government Printing Office, 1946, էջ 3 (հասանելի է անցանց՝ <http://digital.library.wisc.edu/1711.dl/FRUS.FRUS1919Parisv05>):

մասերից Հայաստան վերադառնալու համար հայ տարագիրներին պետք է ընձեռվեն նույն հնարավորությունները, ինչ շնորհվելու են Պաղեստինի հրեա ներգաղթողներին, որպեսզի նրանք ևս հաստատվեն իրենց վաղնջական հայրենիքում»⁶:

Արևմտյան Հայաստանի տարածքի նկատմամբ հայերի իրավունքը թուրքական իշխանությունների կողմից գործված ոճիրների փաստով հիմնավորելու սկզբունքը հանրագումար ձևակերպում ստացավ Փարիզի խաղաղության վեհաժողովի շրջանակներում Տասի խորհրդի⁷ 1919 թ. հունվարի 30-ի նիստի ընթացքում ընդունված բանաձևի երկրորդ կետում. «... Թուրքերի կողմից հայաբնակ ժողովուրդների նկատմամբ իշխանության պարունակյալ չարաշահումների և նախորդ տարիներին հայերի և այլոց սարսափելի կորուսածների պարճատով Դաշնակից և Դաշինքին միացած տերությունները համաձայն են, որ Հայաստանը, Սիրիան, Միջագետքը, Պաղեստինը և Արաբիան ամբողջովին անջատվեն Օսմանյան կայսրությունից»⁸:

2. Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի հարցը հայկական պատվիրակության հետպատերազմյան հուշագրերում

Փարիզի հաշտության վեհաժողովին ներկայացված հայկական միացյալ պատվիրակությունը, առաջ քաշելով տարածքային պահանջներ Արևմտյան Հայաստանի նկատմամբ, դրանք առաջին հերթին հիմնավորում էր ոչ թե «ազգերի ինքնորոշման» վիլսոնյան սկզբունքով, այլ հանուն Անտանտի պետությունների հաղթանակի հայ ժողովրդի կրած զոհողությունների, դաշնակիցներին հայերի ցուցաբերած բարոյական և ռազմական աջակցության փաստերի միջոցով⁹: Եվ այդ հիմքով

⁶ Մեջբերվում է ըստ Հովհաննիսյան Ռիչարդ, *Հայաստանի Հանրապետություն*, հ. I, Առաջին տարին, 1918-1919, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2005, էջ 291:

⁷ Տասի խորհուրդը (հայտնի է նաև Գերագույն խորհուրդ անվամբ) կազմված էր հաղթանակած դաշնակից պետությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, ԱՄՆ, Իտալիա, Ճապոնիա) երկու ներկայացուցիչներից:

⁸ Թարգմանությունը մեր կողմից ըստ United States Department of State, *Papers relating to the foreign relations of the United States, The Paris Peace Conference, 1919*, Vol. III, U.S. Government Printing Office, 1943, էջ 795 (հասանելի է առցանց՝ <http://digital.library.wisc.edu/1711.dl/FRUS.FRUS1919Parisv03>, անգլերեն տեքստը՝ “For similar reasons, and more particularly because of the historical misgovernment by the Turks of subject peoples and the terrible massacres of Armenians and others in recent years, the Allied and Associated Powers are agreed that Armenia, Syria, Mesopotamia, Palestine and Arabia must be completely severed from the Turkish Empire...”):

Այստեղ տեղին է նշել, որ Հայկական հարցում վիլսոնյան սկզբունքների ստորադասումը գիտակցվում էր նաև Անտանտի կազմում մարտնչող այլ պետությունների կողմից: Այսպես, 1919 թ. փետրվարի 3-ին և 4-ին Փարիզի հաշտության վեհաժողովին հունական խնդիրը ներկայացնելիս Հունաստանի վարչապետ Էլեֆտերիոս Վեֆիզելուսը հաստատելով հայերի հանդեպ իր զորավիճությունը, նշում էր, որ թուրքական հարցի կարգավորումը պետք է ենթադրի վիլսոնյան սկզբունքների «լայն ու մեծահոգի մեկնաբանություն», քանզի այսպես անհնարին կլինի լուծել Հայկական հարցը և «այդպիսով դադարեցնել հայ ժողովրդի տառապանքները, որը պատերազմի ընթացքում կորցրեց ավելի քան մեկ միլիոն մարդ» (մեջբերվում է ըստ Հովհաննիսյան Ռիչարդ, *նշվ. աշխ.*, էջ 299):

⁹ Ինչպես Առաջին աշխարհամարտի ընթացքում, այնպես էլ պատերազմից հետո Անտանտի երկրների առաջնորդները հանդես էին գալիս հայերին ուղղված բազմաթիվ խոստումներով՝ հավաստիացնելով նրանց, որ Հայկական հարցը կստանա իր արդարացի լուծումը: Հայանպաստ

հայկական պահանջատիրության արդարացի լինելը բազմաթիվ առիթներով ճանաչվում էր Անտանտի պետությունների տարբեր առաջնորդների կողմից ինչպես պատերազմի ընթացքում, այնպես էլ պատերազմից հետո¹⁰:

Դրա հետ մեկտեղ, քանի որ «ազգերի ինքնորոշման» և «կամարտահայտության» վիլսոնյան սկզբունքները դրված էին վեհաժողովի աշխատանքների հիմքում, հայկական կողմը չէր կարող չանդրադառնալ Մեծ եղեռնի նախօրյակին Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի և այլ էթնիկական խմբերի նկատմամբ հայերի տոկոսային հարաբերակցության հարցերին: Դրանք մասնավորապես արծարծվեցին Հայկական միացյալ պատվիրակության՝ Փարիզի հաշտության վեհաժողովի ուշադրության ներկայացված բազմաթիվ հուշագրերում և տեղեկագրերում, որոնք ուղղված էին միասնական հայկական պետության ստեղծման գաղափարի պաշտպանությանը¹¹:

Նշված փաստաթղթերից առաջինը և գուցե ամենակարևորը «Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ» գրությունն է¹², որը Հայկական միացյալ պատվիրակության ղեկավարներ Պողոս Նուբարը և Ավետիս Ահարոնյանը ներկայացրին Փարիզի հաշտության վեհաժողովի Գերագույն խորհրդի՝ 1919 թ. փետրվարի 26-ի նիստին¹³: Բացի դրանից, Պողոս Նուբարը նույն՝ 1919 թ. փետրվարի 26-ին Գերա-

հայտարարությունների բազմաթիվ նմուշներ, մասնավորապես, հավաքված են 1926 թ. լույս տեսած «Լոզանի պայմանագիրը, Թուրքիան և Հայաստանը» գրքում (տե՛ս *The Lausanne Treaty, Turkey and Armenia, The American Committee Opposed to the Lausanne Treaty*, New York, 1926 էջ 193-199, տե՛ս նաև *Armenian National Council of America, A Memorandum on the Armenian question; presented to the Council of Foreign Ministers, March 7, 1947*, էջ 11-14):

¹⁰ Դաշակից պետությունների պետական գործիչների՝ 1917-1918 թթ. արված բազմաթիվ հայտարարությունները տե՛ս *Armenian National Council of America, A memorandum on the Armenian question; presented to the Council of Foreign Ministers, March 7, 1947*, էջ 11-14:

¹¹ Փարիզի խաղաղության վեհաժողովին հայկական պատվիրակության ներկայացրած հուշագրերի և տեղեկագրերի ցանկը տե՛ս *A catalogue of Paris Peace Conference delegation propaganda in the Hoover War Library, Hoover Institution on War, Revolution, and Peace*, Stanford University, Calif., Stanford University Press, 1926, էջ 7, 19-22:

¹² Ֆրանսերեն բնագիրը տե՛ս *La question arménienne devant la conférence de la paix*, Paris, Dupont, 1919: Հուշագիրը թարգմանվել և լույս է տեսել նաև հայերեն (արևմտահայերեն և արևելահայերեն), ռուսերեն և անգլերեն (տե՛ս *Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ*, Թիֆլիս, տպ. «Աշխատատր», 1919, *Հայկական հարցը խաղաղության ժողովին առջև*, Բոսթոն, 1919, *The Armenian question before the Peace conference*, New York, Press Bureau, The Armenian National Union of America, 1919):

Հայ պատմագրությունը բավականին հանգամանալից անդրադարձել է հուշագրի բովանդակությանը՝ կենտրոնանալով հատկապես դրանում զետեղված տարածքային պահանջներին (տե՛ս Պողոսյան Սամվել, Փարիզի վեհաժողովի հայկական հուշագիրը և նրա հետագա ճակատագիրը, «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2002, № 6, էջ 119-129: Հովհաննիսյան Ռիչարդ, *նշվ. աշխ.*, էջ 303 – 306, Գալոյան Գ., *Հայաստանը և մեծ տերությունները, 1917-1923*, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 102-103), հուշագրում առկա՝ արևմտահայության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալների բովանդակային վերլուծություն, սակայն, չի կատարվել:

¹³ Նիստի արձանագրությունը տե՛ս *United States Department of State, Papers relating to the foreign relations of the United States, The Paris Peace Conference, 1919*, Vol. IV, U.S. Government Printing Office, 1943, էջ 138-157 (հասանելի է առցանց <http://digital.library.wisc.edu/1711.dl/FRUS.FRUS1919Parisv04>):

գույն խորհրդի առջև իր ելույթում հատուկ անդրադարձավ Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի հարցին՝ ներկայացնելով հուշագրում արդեն գետնեղված փաստարկները¹⁴:

Հուշագրի սկզբում նշվում էր. «Հայաստանն իր հսկայական զոհերով ռազմաբեմերում, կոտորածի դաշտերում և տեղահանությունների երկար ճամփաներին մահվանը վճարել է այնպիսի ծանր տուրք, որպիսին ոչ մի ուրիշ պատերազմող ազգ չի տվել: ...Նրա դժբախտությունները կը բավեին արդարացնելու նրա անկախության իրավունքը. բայց... նա ունի և պատմական, ազգագրական, քաղաքական ու բարոյական բնույթ կրող այլ իրավունքներ, որոնք նվազ կարևորություն չունին»¹⁵:

Հայերի «ազգագրական», այն է՝ էթնիկական¹⁶ իրավունքները ներկայացված են հուշագրի՝ «Ամբողջական Հայաստանը» խորագրի կրող բաժնում և հատկապես «Հայաստանի բնակչությունը» վերնագրված հավելվածում, որն ամբողջությամբ նվիրված է Առաջին աշխարհամարտից առաջ և հետո Արևմտյան և Արևելյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի, այլ ազգությունների հետ հայերի տոկոսային հարաբերակցության խնդրին:

Հուշագրի հեղինակները փաստում են, որ Հայաստանի բնակչության հարցը քննելիս նկատի են առնելու Առաջին աշխարհամարտից առաջ կամ ավելի շուտ՝ 1894-1896 թթ. համիդյան կոտորածներից առաջ եղած վիճակագրությունները, քանի որ այդ կոտորածները ոչ միայն 300,000 զոհ խլեցին հայերից, այլ նաև պատճառ դարձան ժողովրդի մի նշանակալի մասի գաղթելուն: «Անյուլատրելի է, – շարունակվում էր հուշագրում, – որ ոճիրներից օգուտ քաղեն նրանց հեղինակները, և նրանք հասնեն իրենց հրեշավոր ծրագրի նպատակին՝ ապահովել մահմեդականների մեծամասնությունն ու գերակայությունը: **Պետք է նկատի առնվի ողջ թեմեռած բոլոր հայերի ձայնը** (ընդգծումը բնագրինն է – Ռ. Թ.)»¹⁷:

Հուշագրի հեղինակներն ընդունում էին, որ Մեծ եղեռնի նախօրյակին հայերն Արևմտյան Հայաստանում «ապրող ցեղերի ամբողջության վրա» բացարձակ մեծամասնություն չէին կազմում, սակայն մեծամասնություն էին առանձին վերցրած մուսուլման ազգություններից յուրաքանչյուրի համեմատությամբ. «Պատերազմից առաջ և նախքան 19-րդ դարու վերջի գաղթականությունները, հայերի թիվը հայկական կոչված վեց վիլայեթներում, Տրապիզոնի վիլայեթում և Կիլիկիայում ավելի էր, քան թյուրքերինը և քյուրդերինը՝ առանձին վերցված, և նույնիսկ հավասար թյուրքերի և քյուրդերի միացյալ թվին: Այդտեղ կային 1,403,000 հայեր՝ 943,000 թյուրքերի և 482,000 քյուրդերի դեմ», – նշվում էր հուշագրում¹⁸: Արձանագրենք, որ հուշագրի հեղինակների այս պնդումը պետք է ընդունել որոշ վերապահումով. իրենք՝ Հայկական հարցի լուծումը հետապնդող հայկական կառույցները, նախ-

¹⁴ Նույն տեղում, էջ 154-155:

¹⁵ Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ..., էջ 4:

¹⁶ Ֆրանսերեն բնագրում՝ «ethnique» (տե՛ս *La question arménienne devant la Conférence de la paix...*, էջ 1):

¹⁷ Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ..., էջ 7:

¹⁸ Նույն տեղում:

կինում բազմիցս փաստում էին, որ Տրապիզոնի նահանգում, ինչպես նաև վեց նահանգների որոշ ծայրամասային գավառներում (Հաքյարի, Սդերդ, Դիարբեքիրի և Մալաթիայի նահանգների հարավային և Սեբաստիայի նահանգի արևմտյան և հյուսիս-արևմտյան շրջանները) հայերը ոչ նշանակալի փոքրամասնություն էին կազմում և նշում, որ այդ շրջաններն օսմանյան իշխանությունները կցել էին բուն հայաբնակ տարածքներին արհեստականորեն՝ հայերի տեսակարար կշիռը նվազեցնելու նպատակով¹⁹:

«Հայաստանի բնակչությունը» բաժնում հեղինակները ներկայացնում են հետևյալ հարցադրումը. «Ի՞նչ էր Հայաստանի ազգաբնակչության թիվը կոտորածներից առաջ, և ի՞նչ էր զանազան տարրերի միջև համեմատությունը»: Ամփջապես հետո փաստվում էր, որ հարցի պատասխանը ստանալու համար երբեք չպետք է դիմել թուրքական տվյալներին, քանի որ օսմանյան կառավարությունը միշտ միտումնավոր կեղծել է վիճակագրությունները՝ հաստատելու համար, որ հայերը միայն աննշան փոքրամասնություն են կազմում²⁰: Ի հիմնավորումն վերոնշյալ դրույթի՝ հեղինակները «կեղծիքների» հետևյալ մի քանի ուշագրավ օրինակներ էին ներկայացնում.

1. Համաձայն օսմանյան վիճակագրության՝ Վանի նահանգի հայ բնակչության թիվը շուրջ 80,000 էր, մինչդեռ Առաջին աշխարհամարտի տարիներին Ռուսաստանում ապաստանել էր 220,000-ից ավելի վանեցի հայ:
2. Ամբողջ Մարաշի սանջակում, ըստ թուրքական կառավարության տվյալների, բնակվում էր 4,200 հայ²¹, մինչդեռ միայն Մարաշ քաղաքում, ֆրանսիացի աշխարհագետ և ճանապարհորդ Էլիզե Ռեքլյուի տվյալներով կային ավելի քան 20,000 հայեր: Իսկ նույն Մարաշի սանջակի կազմ ընդգրկված Զեյթունը, ըստ 1880 թ. վիճակագրության, ունեցել է 27,640 հայեր:
3. Օսմանյան կառավարությունը Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի, Խարբերդի, Էրզրումի, Տրապիզոնի, Սեբաստիայի, Ադանայի և Հալեպի վիլայեթների հայե-

¹⁹ Տե՛ս մասնավորապես 1912-ին Հայկական հարցի վերաբացման առիթով Կ. Պոլսի պատրիարքարանի կողմից մեծ տերությունների ուշադրությանը ներկայացված հայկական բարենորոգումների նախագիծն իր հիմնավորումներով (ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 15, թ. 110-118):

²⁰ Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ..., էջ 16:

²¹ Այս տվյալը վերցված է ֆրանսիացի վիճակագիր Վիտալ Քինեի՝ 1891 թ. լույս տեսած «Ասիական Թուրքիա» աշխատությունից, որի համաձայն Մարաշի գավառում հայերի թիվն էր 4,313 (տե՛ս Cuinet V., *La Turquie d'Asie*, v. 2, Paris, Ernest Leroux, 1891, էջ 227): Նշենք, որ հուշագրի հեղինակների կողմից Քինեի տվյալները որպես օսմանյան կառավարության տվյալներ ներկայացնելը սխալ չի կարող դիտվել, քանի որ Քինեն որպես իր վիճակագրության հիմք ընդունել է օսմանյան պաշտոնական տվյալները: Բացի դրանից, հուշագրի գրելու ժամանակ (1919 թ. փետրվար) արևմտահայության թվաքանակի վերաբերյալ շրջանառության մեջ դրված օսմանյան պաշտոնական որևէ այլ տվյալ բացակայում էր: Օսմանյան կառավարությունը ներկայացրել է 1914 թ. համար օսմանյան պաշտոնական վիճակագրական տվյալներն ավելի ուշ՝ 1919 թ. ապրիլի 14-ին (տե՛ս Zamir Meir, *Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919*, “*Middle Eastern Studies*”, Vol. 17, No. 1, Jan., 1981, էջ 88): Համաձայն այդ տվյալների՝ 1914 թ. Մարաշի սանջակի հայ բնակչության թվաքանակն էր (նույնպես իրականից ցածր)՝ 38,433 (տե՛ս Karpat K., *Ottoman Population, 1830-1914: Demographic and Social Characteristics*, University of Wisconsin Press, 1985, էջ 188, տե՛ս նաև Zamir Meir, *Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919...*, էջ 100):

րի ընդհանուր թիվը ներկայացնում է 848,000²², մինչդեռ ԱՄՆ-ում գործող «Հայաստանի և Սիրիայի նպաստամատույց կոմիտեի»՝ 1916 թ. հրատարակված տվյալների համաձայն՝ Հայաստանում գոհված հայերի թիվն էր շուրջ 600,000-850,000, տեղահանվածների թիվը՝ 486,000, Փոքր Ասիայի ներքին շրջաններ տեղահանվածների թիվը՝ 300,000, Կովկաս ապաստանածների թիվը՝ 200,000²³:

Այնուհետև հուշագրում ներկայացվում էին արևմտահայության թվաքանակի վիճակագրության խեղաթյուրման նպատակով թուրքական կառավարության ներդրած համակարգի երկու հիմնական տարրերը.

1. հնարավորինս նվազեցնել քրիստոնյաների (այդ թվում նաև հայերի) թիվը՝ առանց էականորեն փոխելու ընդհանուր ազգաբնակչության թիվը, և տարբերությունն ավելացնել մահմեդականների թվի վրա.
2. զգուշանալ ազգությունների ճշգրիտ թիվը տալուց, այլ նրանց խմբավորել ըստ կրոնի՝ առանձին նշելով առաքելական, կաթոլիկ և բողոքական հայերին և մեկ թվի տակ ներկայացնելով մահմեդականներին (թուրքեր, թաթարներ, թուրքմեններ, քրդական զանազան ցեղեր, չերքեզներ, զազաներ, արաբներ, պարսիկներ և այլն), թեև «նրանք շատ տարբեր են իրարից՝ ցեղով, պատմությամբ, տնտեսական կյանքով, կուլտուրական մակարդակով և վերջապես՝ քաղաքական հակումներով»²⁴:

Ի հիմնավորումն հուշագրում ներկայացված հայկական կողմի էթնիկական փաստարկների՝ հավելվածում զետեղվել էին հինգ վիճակագրական աղյուսակներ: Դրանցից զուտ արևմտահայության թվաքանակին են վերաբերում երկուսը՝ «Աղյուսակ №1. Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթների ազգաբնակչության ցուցակը 1912 թվականին» և «Աղյուսակ №2. Յոթ վիլայեթների և Կիլիկիայի ազգաբնակչությունը 1914 թվականին»: Այդ աղյուսակներում զետեղված տվյալների քննությունը ցույց է տալիս, որ դրանք հիմնված են դեռևս 1912 թ. վերջին Հայկական հարցի վերաբացման կապակցությամբ Հայոց պատրիարքարանին կից ստեղծված Ապահովության հանձնաժողովի տվյալների վրա²⁵. մասնավորապես առաջին աղյուսակը (տե՛ս ստորև Աղյուսակ 1) վերցվել էր առանց փոփոխության Ապահովության հանձնաժողովի պատրաստած բարեփոխումների ծրագրից:

²² Այս տվյալի աղբյուրը նույնպես Վիտալ Բինեի «Ասիական Թուրքիա» աշխատությունն է:

²³ Տե՛ս *Հայկական հարցը հաշտության կոնֆերանսի առաջ...*, էջ 17:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Ապահովության հանձնաժողովի աշխատանքների մասին մանրամասն տե՛ս Թաթոյան Ռ., *Արևմտահայության թվաքանակի հարցը 1878-1914 թվականներին*, Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2015, էջ 92-94:

Աղյուսակ 1. Վեց վիղայեթների ազգաբնակչության ցուցակը 1912 թվականին²⁶

	Երկրում	Վան	Բիթլիս	Խաղբերո	Դիարբեքի	Սյակ	Ընդամենը	Ըստ կրոնի
Մահմեդականներ								
Թուրքեր	240,000	47,000	40,000	102,000	45,000	192,000	666,000	
Չերեքներ	7,000	-	10,000	-	-	45,000	62,000	
Պարսիկներ	13,000	-	-	-	-	-	13,000	1,178,000
Լալեր	10,000	-	-	-	-	-	10,000	
Գնչուներ	-	3,000	-	-	-	-	3,000	
Քրդեր նասալյաց	35,000	32,000	35,000	75,000	30,000	35,000	242,000	
Քրդեր թափառական	40,000	40,000	42,000	20,000	25,000	15,000	182,000	
Քրիստոնյաներ								
Հայեր	215,000	185,000	180,000	168,000	105,000	165,000	1,018,000	
Նեստորականներ Հակոբիկյաններ, խաղեր	-	18,000	15,000	5,000	60,000	25,000	123,000	1,183,000
Հույներ և այլ քրիստոնյաներ	12,000	-	-	-	-	30,000	42,000	
Մահմեդականներ								
Ղուլբաշներ	25,000	-	8,000	80,000	27,000	-	140,000	254,000
Չապա-Տնփիլ-Չա-րիկլը	30,000	-	47,000	-	-	-	77,000	
Եպիսեներ	3,000	25,000	5,000	-	4,000	-	37,000	
ԸՆԴԱՄՈՒՐ ԳՈՒՄԱՐ	630,000	350,000	382,000	450,000	296,000	507,000	ԸՆԴՀԱՄՈՒՐ ԳՈՒՄԱՐ	2,615,000

²⁶ Աղյուսակին կից ծանոթագրության կարգով նշվում է. «Հեղյարիից, Սիերոիից, Դիարբեքիից, Մալաթիայից հարավ և Սկազից արևմուտք ու հյուսիս-արևմուտք շրջանները չեն մտնում այս ցուցակի մեջ»:

Առավել հետաքրքրություն էր ներկայացնում հուշագրի երկրորդ՝ «Յոթ վիլայեթների»²⁷ և Կիլիկիայի ազգաբնակչությունը 1914 թվականին» աղյուսակը, որը ամենայն հավանականությամբ կազմվել է հենց հուշագրի հավելվածի հեղինակների կողմից (տե՛ս ստորև):

Աղյուսակ 2. Յոթ վիլայեթների և Կիլիկիայի ազգաբնակչությունը 1914 թվականին

	7 վիլայեթները Տիգրիսից հարավ և Եջիլ Ըրնակից արև- մուտք շրջաններն առանց հաշվելու	Կիլիկիան Մարաշի, Խոպա- նի և Ջեբել Բերե- քեթի սանջակները (ներառյալ) ²⁸	Գումար	
Հայեր	1,198,000	205,000	1,403,000	1,850,000 քրիստոնյաներ
Հույներ	242,000	40,000	282,000	
Նեստորական, հակոբյան, քաղդեացի և եվրոպացիներ	124,000	41,000	165,000	
Թուրքեր	865,000	78,000	943,000	1,635,000 մահմեդա- կաններ
Քրդեր	424,000	58,000	482,000	
Լալեր, չերքեզներ, արաբներ, պարսիկներ	190,000	20,000	210,000	
Ղվլբաշներ, եգիպտացիներ, ֆելլահներ և այլն	255,000	48,000	303,000	303,000 պանապան կրոններ
	3,298,000	490,000	3,788,000	
Տաճկաստանում²⁹ հայերի թիվը 1914 թվականին				
Տաճկահայաստանում ³⁰			1,403,000	
Ասիական Թուրքիայի այլ մասերում.....			440,000	
Պոլսում և եվրոպական Թուրքիայում.....			183,000	
Ընդամենը			2,026,000 հայեր:	

²⁷ Արևմտյան Հայաստանի վեց նահանգներն ամբողջությամբ՝ գումարած Տրապիզոնի նահանգի Տրապիզոնի սանջակը:

²⁸ Կիլիկիայի մեջ հուշագրին հեղինակներն ընդգրկել էին հետևյալ օսմանյան վարչական միավորները՝ Ադանայի նահանգն ամբողջությամբ, Մարաշի սանջակը (Մարաշ, Ջեթոն, Ֆոնուզ) և Հալեպի նահանգի Հալեպի սանջակի Ալեքսանդրետի գավառակը:

²⁹ Օսմանյան կայսրություն:

³⁰ Հայկական վեց նահանգներ, Տրապիզոնի գավառ և Կիլիկիայի Ադանայի, Մարաշի, Խոպանի և Ջեբել Բերեքեթի սանջակները:

Օսմանյան կայսրության ընդհանուր հայ բնակչության այս 2,026,000 թիվն առաջին անգամ էր դրվում շրջանառության մեջ³¹: Նախկինում Հայոց պատրիարքարանի՝ 1912 թ. վիճակագրության տվյալներն օգտագործել էր Գրիգոր Զոհրապը, մասնավորապես Մարսել Լեար ծածկանվան տակ 1913 թ. ֆրանսերեն հրատարակած իր «Հայկական հարցը փաստաթղթերի լույսի տակ» հայտնի աշխատանքում³²: Զոհրապի գրքում զետեղված 1912 թ. Հայոց պատրիարքարանի վիճակագրական տվյալները 1919 թ. հուլիսի տվյալների համեմատ որոշ տարբերություններ են պարունակում: Այսպես, եթե Արևմտյան Հայաստանի վեց նահանգների հայ բնակչության թվաքանակի համար Զոհրապի տվյալը նույնն է՝ 1,163,000 շուրջ, ապա Օսմանյան կայսրության մնացած մասի համար նշված է 937,000 հայ, որից 407,000-ը՝ Կիլիկիայում, 530,000-ը՝ Օսմանյան կայսրության այլ տարածքներում և Եվրոպական Թուրքիայում (համեմատության համար՝ 1912 թ. Հայոց պատրիարքարանի վիճակագրության՝ Թեոդիկի «Ամենուն տարեցույցում» հրատարակված տարբերակում նույն տարածքների համար տրվում է 863,700 հայ, այդ թվում՝ Կիլիկիայի երկու (Ադանայի և Հալեպի) նահանգներ՝ 304,000): Այսպիսով, համագումար թիվը 1912 թ. ամբողջ Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակի համար Գրիգոր Զոհրապի մոտ կազմում է 2,100,000³³: Աղբյուրների ներկա վիճակը մեզ հնարավորություն չի ընձեռում որևէ հիմնավոր բացատրություն տալու մի կողմից՝ Հայաստանի միացյալ պատվիրակության, մյուս կողմից՝ Գրիգոր Զոհրապի տվյալների միջև առկա տարբերության պատճառների մասին: Չենք կարող բացառել, որ Զոհրապն իր տրամադրության տակ եղած տվյալների հիման վրա փոխել է 1912 թ. վիճակագրության՝ Կիլիկիային և Օսմանյան կայսրության այլ տարածքներին վերաբերող ցուցանիշները:

Փարիզի կոնֆերանսին հայկական պատվիրակության՝ տարբեր առիթներով հետազայում հրատարակված այլ հուշագրերում և տեղեկագրերում զետեղված Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի վերաբերյալ վիճակագրական տվյալներն ու աղյուսակներն ըստ էության 1919 թ. փետրվարի 12-ի հուշագրի տվյալների վերատպությունն են³⁴:

³¹ Ամբողջությամբ, ըստ Օսմանյան կայսրության բոլոր նահանգների, վիճակագրությունը հրատարակվել է Թեոդիկի «Ամենուն տարեցույց»-ում (տե՛ս Թեոդիկ, *Ամենուն տարեցույցը*, ԺԶ տարի, 1922, Կ.Պոլիս, տպ. Մ. Յովակիմեան, 1922, էջ 261-263):

³² Գ. Զոհրապի տվյալները տե՛ս Leart Marcel, *La question Armenienne a la lumiere des documents*, Paris, Challamel, 1913. Հայկական պատվիրակության տարբերակը տե՛ս Թեոդիկ, *նշվ. աշխ.*, էջ 262:

³³ Տե՛ս Leart Marcel, *նշվ. աշխ.*, էջ 62:

³⁴ Տե՛ս մասնավորապես *Tableau approximatif des réparations et indemnités pour les dommages subis par la nation arménienne en Arménie de Turquie et dans la République Arménienne du Caucase*, Paris, 1919 (ներկայացվել է Փարիզի հաշտության կոնֆերանսին 1919թ. ապրիլի 6-ին), *Population Armenienne de la Turquie avant la guerre. Statistiques établies par le Patriarcat Armenienne de Constantinople*, Paris, Turabian, 1920, Poghos Nubar, *The Pre-War Population of Cilicia*, Paris, 1920, 1920 թ. փետրվարի 12-24-ին կայացած Լոնդոնի վեհաժողովի համար հայկական պատվիրակության պատրաստած տեղեկագրերը (ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 1325, թթ. 1-56), *L'Arménie et La Question Armenienne Avant, pendant et depuis la guerre*, Paris, 1922, 923 թ. Լոզանի վեհաժողովին հայկական պատվիրակության

Արժանի է հիշատակման, որ հուշագրերի և տեղեկագրերի պատրաստմանն Ազգային պատվիրակությունը ներգրավել է, ի թիվս այլ հայ ուսումնասիրողների, և Նիկողայոս Ադոնցին: Անվանի հայագետն իր «Հայաստանի սահմանների խնդիրը» գրության մեջ և արդեն հետագայում Ազգերի լիգայի գերագույն խորհրդին տրվելիք հուշագրի նախագծում քննադատության է ենթարկում օսմանյան պաշտոնական վիճակագրության տվյալները, օսմանյան վիճակագրական տարբեր ցուցակների համեմատական վերլուծության միջոցով բացահայտում է դրանցում տեղ գտած անճշտությունները և հակասությունները³⁵:

Հայկական հարցի հայանպաստ լուծման նպատակով Հայ ազգային պատվիրակությանը զուգահեռ և համագործակցաբար Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության վիճակի վերաբերյալ տարբեր, այդ թվում նաև վիճակագրական տվյալների հավաքմամբ և ամփոփմամբ էր զբաղվում նաև Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանը: Արդեն Մուդրոսի զինադադարի կնքումից անմիջապես հետո՝ 1918 թ. նոյեմբեր–դեկտեմբեր ամիսներին Պոլսի հայ մտավորականների և ազգային երեսփոխանական ժողովի նախկին անդամների մասնակցությամբ ստեղծվում է «Ազգային Լիգա», իսկ այնուհետև՝ «Ազգային խորհրդակցական ժողով» կառույցները, որի անդամներն էին Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանը, պրոֆեսոր Աբրահամ Տեր–Հակոբյանը, դոկտոր Վահրամ Թորգոմյանը և այլք³⁶: Ազգային խորհրդակցական ժողովի «Փաստաթղթերի հանձնախումբը» աշխատանք է տանում նաև Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տվյալների հավաքման ուղղությամբ: Հավաքված նյութերի մի մասը

ներկայացրած հուշագիրը (ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 1358, թթ. 3-32): Բացի վերոնշյալ հուշագրերից և տեղեկագրերից, Հայ ազգային պատվիրակությունը 1918-19 թթ. հրատարակել և Անտանտի պետությունների պատվիրակությունների ուշադրությանն է ներկայացրել Հայկական հարցի տարբեր ասպեկտներին վերաբերող հայ և օտար հեղինակների 23 անուն պրակ, որոնցից մի քանիսում անդրադարձ կա արևմտահայության թվաքանակի հարցին (պրակների ցանկը տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 167, թ. 9-10):

Արժանահիշատակ է, որ Հայաստանի Առաջին հանրապետության պետական գործիչ Ալեքսանդր Խատիսյանն իր «Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը» գրքում հաղորդում է, որ Հայկական միացյալ պատվիրակությունը 1923 թ. Լոզանի խորհրդածողովի պատվիրակների ուշադրությանը ներկայացված գրություններից մեկում Մեծ եղեռնի նախօրյակին Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը տրված էր 2,250,000 (տե՛ս Խատիսյան Ա., *Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը*, Պէյրոս, տպ. «Համազգային», 1968, էջ 365): Այս թիվը մեր կարծիքով մոտ է իրականությանը, սակայն, ցավոք, Խատիսյանը դրա հետ կապված որևէ այլ մանրամասնություն (տվյալի հիմքերը, բաշխումն ըստ գավառների և այլն) չի նշում: Նույնպես և Հայկական պատվիրակության՝ Լոզանի խորհրդածողովին ներկայացված հուշագրերում այս թիվը վկայված չէ: Հայաստանի ազգային արխիվի Հայկական միացյալ պատվիրակության ֆոնդում (ՀԱԱ, ֆ. 430) մեր պրպտումների ժամանակ մեզ չի հաջողվել գտնել Խատիսյանի կողմից նշվող տվյալի հետ կապված որևէ փաստաթուղթ:

³⁵ Տե՛ս Ադոնց Ն., *Հայաստանի սահմանների խնդիրը*: Նույնի՝ *Հայկական հարց*, Երևան, 1994, էջ 137-143: Նույնի՝ *Գերագույն խորհրդին տրվելիք հիշատակագրի նախագիծ* (ՀԱԱ, ֆ.430, ց.1, գ. 246, թ. 15-20):

³⁶ Տե՛ս Միրունի Յակոբ, *Ինքնակենսագրական նոթեր*, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատ., 2006, էջ 206-207:

հրատարակվում է 1919 թ.՝ արևմտահայ մտավորականներ Չիթունու (Տիգրան Չիթյան)³⁷ և Գևորգ Մեսրոպի (Գևորգ Տեր-Մեսրոպյան) կողմից³⁸:

1919 թ. օգոստոսին Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանին կից ստեղծվում է «Տեղեկատու դիվան» կառույցը, որի աշխատանքների համակարգումը հանձնարարվում է Արշակ Ալպոյաճյանին³⁹: Համաձայն Տեղեկատու դիվանի կանոնագրի՝ այնտեղ պետք է կենտրոնանային «Հայաստանի եւ հայկական դատի վերաբերյալ հին թէ՛ նոր ամէն կարգի վիճակագրութիւններն, ...հայ հալածանքներու, ջարդերու, տեղահանութեան վերաբերյալ բոլոր դրուագներն ու պատմութիւններ, կողոպտուած ազգային թէ՛ անհատական շարժուն թէ՛ անշարժ գոյքերու մասին վիճակագրական պատկերներ...»⁴⁰: Տեղեկատու դիվանի՝ 1920 թ. հունիսի 29-ին կազմած հաշվետվության մեջ նշվում էր, որ կառույցը «ձեռնարկած է պատրաստութեանը հաւաքածոյի մը, որ կը պատկերացնէ Պատրիարքարանի թեմերուն [Առաջին համաշխարհային] պատերազմի վաղորդային ունեցած իրական վիճակը. այսինքն իւրաքանչիւր առաջնորդութեան եկեղեցիներուն, վանքերու, դպրոցներուն, ազգային սեփականութեանց եւ բնակչութեան թիւը»⁴¹: Հաշվետվության՝ «Վաւերագիրներու հաւաքում եւ մատենադարան» բաժնում նշվում էր, որ Դիվանը «... կը հաւաքէ եւ կը դասաւորէ ...բոլոր շահեկան վաւերագիրները Հայոց ընկերային եւ քաղաքական կեանքին: Այսպէս, Հայ ընկերակցութիւններու կամ պաշտօնական մարմիններու կողմէ հրատարակուած 600-է աւելի տեղեկագիրներ, վիճակագրութիւններ ու այլն»⁴²:

Նույն՝ 1919 թ., արևմտահայ մտավորական Թեոդիկը Մեծ եղեռնի ընթացքում նահատակված հայ հոգևորականության մասին նյութեր հավաքելու ժամանակ, պրպտելով Պատրիարքարանի արխիվը, նկուղներում գտնում է պարկերի մեջ լցված թղթեր: Դրանք Օսմանյան կայսրության հայկական թեմերի կողմից Հայոց պատրիարքարանի հանձնարարությամբ Առաջին աշխարհամարտի նախօրյակին լրացված և պատրիարքարան ուղարկված վիճակագրական հարցաթերթերն էին (այսպես կոչված՝ 1913-14 թթ. Հայոց պատրիարքարանի մարդահամար),

³⁷ Տե՛ս Չիթունի, *Հուշիկը Հայաստանի*, Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 1919: Նույնի՝ *Աս ու լիս Հայաստանի*, Կ. Պոլիս, տպ. Կ. Քեչիշեան որդի, 1920:

³⁸ Տե՛ս Մեսրոպ Գ., *Հայաստան: Աշխարհագրական, պարմական, ցեղագրական, վիճակագրական եւ մշակութային տեսակետներով: Իւրացուած ազգ. խորհրդակց. ժողովի «Փաստաթուղթերու յանձնախումբ»* էն, Կ. Պոլիս, տպ. Օ. Արզուման, 1919:

Մասնավորապես Չիթունին, համադրելով վիճակագրական մի շարք աղբյուրներ, պատերազմից հետո հայ ուսումնասիրողներից, հավանաբար, առաջինը գալիս է այն եզրահանգման, որ մինչև 1915թ. Օսմանյան կայսրության հայ բնակչության թիվը կազմում էր շուրջ 2,500,000, որից 200,000-ը՝ Եվրոպական Թուրքիայում, 800,000-ը՝ Փոքր Ասիայի և Պաղեստին-Միջագետքի վիլայեթներում և 1,500,000-ը՝ հայաբնակ վեց նահանգներում (տե՛ս Չիթունի, *Հուշիկը Հայաստանի...*, էջ 63):

³⁹ Տե՛ս Զաւէն պատրիարք, *Պատրիարքական յուշերս. վավերագրեր եւ վկայութիւններ*, Թեհրան, 2014, էջ 367:

⁴⁰ Նույն տեղում, էջ 368:

⁴¹ Նույն տեղում, էջ 369:

⁴² Նույն տեղում, էջ 370:

որոնք 1915 թ. ապրիլի 24-ի ձերբակալություններից անմիջապես հետո թաքցվել էին նկուղում՝ Հայկական հարցին վերաբերող այլ փաստաթղթերի հետ միասին⁴³: Թեոդիկը մասամբ շրջանառության մեջ է դնում այդ հարցաթերթերից քաղված վիճակագրական տվյալներն իր՝ 1921 թ. հրատարակված «Գողգոթա հայ հոգևորականության և իր հոտին աղետալի 1915 տարին» գրքում: Հարցաթերթերի պատճենները նաև փոխանցվում են «Տեղեկատու դիվանին» և ուղարկվում Փարիզ՝ Հայ ազգային պատվիրակությանը⁴⁴:

Առաջին աշխարհամարտից հետո հայկական իրականության մեջ գործող տարբեր կառույցներից Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի, Մեծ եղեռնի արդյունքում հայության կրած կորուստների հարցերի նկատմամբ հետաքրքրություն են դրսևորել նաև Կիլիկիայի կաթողիկոսարանի նախաձեռնությամբ Հալեպում 1918 թ. դեկտեմբերին ստեղծված «Ազգային միությունը»⁴⁵ և նրա հովանու ներքո Հալեպում վերապրած հայության բեկորներից կազմված թվով 32 զանազան հայրենակցական «Միջգավառային միությունները»: Ինչպես իր հուշերում նշում է «Միջգավառային միության» ատենապետի պաշտոնը զբաղեցրած Հայկ Արամյանը, 1919 թ. սկզբին կառույցը «ամեն գավառի ու քաղաքի կարող անձերից կազմված» բոլոր հանձնախմբերին հանձնարարեց պատրաստել «մանրամասն» տեղեկագիր, վիճակացույց և ամբաստանագիր՝ հայության «սուրբ դատին համար իբրև փաստաթուղթ ծառայելու» նպատակով⁴⁶: Կազմվում են թվով

⁴³ Տե՛ս Թեոդիկ, *Գողգոթա հայ հոգևորականության և իր հոգին 1915 աղետալի տարին*, Նի Եորք, 1985, էջ III:

⁴⁴ Ներկայումս Հայոց պատրիարքարանի՝ 1913-14 թթ. մարդահամարի՝ Հայ ազգային պատվիրակությանը փոխանցված հարցաթերթերը պահվում են Փարիզի Նուբարյան գրադարանում: Դրանցից լայնորեն օգտվել է և սիյուռքահայ ուսումնասիրող Ռայմոն Գևորգյանը, որը Փոլ Փարոյջանի համահեղինակությամբ 1992 թ. ֆրանսերենով հրատարակած «Հայերը Օսմանյան կայսրությունում ցեղասպանության նախօրյակին» մեծածավալ աշխատության մեջ տալիս է մարդահամարի տվյալների հիման վրա Օսմանյան կայսրության հայ բնակչության թվաքանակի բնակավայր առ բնակավայր պատկերը (տե՛ս Kévorkian R. and Paboudjian P. B., *Les Arméniens dans l'Empire ottoman à la veille du génocide*, Paris, ARHIS, 1992): Հայոց պատրիարքարանի՝ 1913-14 թթ. մարդահամարի մասին տե՛ս նաև Թաթոյան Ռ., *Եզվ. աշխ.*, էջ 92-115:

⁴⁵ Հալեպի Հայ Ազգային Միությունը հիմնվել էր՝ նպատակ ունենալով «Հոգալ Հալեպի և անմիջական շրջակայից մեջ գտնուող հայ տարագրեալներու պետքերը, հետապնդել քաղաքական բաղձանքները, հայթայթել հայրենիք վերադարձի միջոցները և առ այս հաղորդակցութիւն հաստատել ընդի. Հայ Ազգային Միութեան վսեմ. նախագահ Պօղոս Փաշա Նուպարի, արտասահմանի և Սուրիոյ մեջ գտնուող քոյր միութեանց, տեղական իշխանութեան և դաշնակից պետութեանց յարգաբժան ներկայացուցիչներուն հետ»: Հիմնադիր նիստը գումարվել էր Սահակ Բ Կաթողիկոսի հրավերով 1918 թ. դեկտեմբերի 19-ին: Կառույցը գործել է մինչև 1925 թ. («Ազգային միության» գործունեության մասին տեղեկությունը ստացել ենք հայ ուսումնասիրող Միհրան Մինասյանից):

⁴⁶ Տե՛ս Արամեան Հայկ Ս., Շահեկան տեղեկագիր մը Զեյթունի և գեյթունցիներու ողբերգութեան մասին, «Յուշամատենան Մեծ եղեռնի. 1915-1965», պատր.՝ Գ. Ահարոնեան, Պէյրոս, տպ. «Ատլաս», «Զարթօնք» օրաթերթի հրատ., 1965, էջ 850:

Հայկ Արամյանի տեղեկությունը հավելում է «Միջգավառային միության» քարտուղար Կարապետ Գաբիկյանը. «Ազգ. Միութեան յանձնարարութեան վրայ Միջ-Գավառային Միութիւնը պատրաստեց ընդարձակ ու մանրամասնեալ Տեղեկագիր մը, կարեւոր վիճակագրութիւններով

32 տեղեկագրեր, որոնք հանձնվում են 1919 թ. փետրվարին Փարիզում գումարված Արևմտահայերի ազգային համագումարի՝ Հալեպից պատգամավոր ընտրված դոկտոր Ասատուր Ալթունյանին և նրա քարտուղար Արամ Անտոնյանին՝ Ազգային պատվիրակության ուշադրությանը ներկայացնելու համար⁴⁷:

Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրության համեմատությամբ «ամբաստանագիր-տեղեկագրերում» առկա վիճակագրական տվյալներն ավելի բարձր ցուցանիշներ են պարունակում համապատասխան գավառների հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ.

Աղյուսակ 3.

Վարչական միավոր	Հայոց պատրիարքարանի 1912 թ. վիճակագրություն ⁴⁸	«ամբաստանագիր-տեղեկագիր»
Սեբաստիայի նահանգ	225,000	341,556 ⁴⁹
Էդիրնեի (Ադրիանապոլիսի) նահանգ	27,500	32,000 ⁵⁰
Բիթլիսի նահանգ	198,000	255,000 ⁵¹

Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի հարցին կարևորություն է տրվել նաև 1919 թ. փետրվարի 24-ից ապրիլի 22-ը տեղի ունեցած Արևմտահայերի ազգային համագումարի աշխատանքների ընթացքում: Հարցն արծարծվել է հատկապես Համագումարի շրջանակներում ստեղծված Հայաստանի սահմա-

պատկերելով իւրաքանչիւր գյուղի, քաղաքի, տեղի՝ Տարագրութենէ առաջ Հայ բնակչութեան թիւը, տեղահանումի համառօտ պատմութիւնը, վերապրող բեկորներուն թիւը, Ազգային եւ անհատական վնասուց որքանութիւնը եւ այլ յարակից տեղեկութիւններ» (տե՛ս Գումկան Սեբաստիոյ (Կ. Գաբրիկեան), *Եղեռնապարուն. Փորուն Հայոց եւ նորին Մեծի մայրաքաղաքին Սեբաստիոյ, Պոսթըն*, «Հայրենիքի» տպարան, 1924, էջ 550):

⁴⁷ Նշված տեղեկագրերից մի քանիսը, բայց ոչ բոլորը, ներկայումս պահվում են Նուբարյան գրադարանում: Դրանցից՝ Սեբաստիայի, Ադրիանապոլիսի (Էդիրնե), Բաղեշի, Էրզրումի նահանգների տեղեկագրերը հրատարակվել են սփյուռքահայ ուսումնասիրող Լևոն Վարդանի կողմից 1995-ին «Հայկազյան հայագիտական հանդեսում» (տե՛ս «Հայկազեան Հայագիտական Հանդես», հատոր ԺԵ, Պեյրուս, 1995, էջ 497-564): Զեյթունի տեղեկագիրը հրատարակվել է Հայկ Արամյանի կողմից (տե՛ս Արամյան Հայկ Ս., Շահեկան տեղեկագիր մը Զեյթունի եւ զեյթունցիներու ողբերգութեան մասին, «Յուշամատենան Մեծ Եղեռնի. 1915-1965»..., էջ 850-855):

⁴⁸ Տե՛ս Թեղդիկ, Ամենուն տարեցոյցը..., էջ 261-262:

⁴⁹ Այդ թվում՝ Սեբաստիայի գավառ՝ 174,625, Ամասիայի գավառ՝ 51,450, Եվդոկիայի (Թոքատ) գավառ՝ 71,050, Շապին-Գարահիսարի գավառ՝ 44,431 հայ: Նահանգի համար ամփոփ տվյալի հաշվարկը մեր կողմից ըստ «Հայկազեան Հայագիտական Հանդես»..., էջ 499-518:

⁵⁰ Այդ թվում՝ Ադրիանապոլիսի (Էդիրնե)՝ 3,000, Ռոդոսթոն՝ 17,000, Մալկարա՝ 4,000, Գալիպոլի՝ 3,000, Չորլու՝ 3,500, Հայրապոլ, Պապանեքի, Քեշան, Ուզունքյոփրիվ, Բուրգաս՝ 1,500 (տայն տեղում, էջ 519):

⁵¹ Այդ թվում՝ Բիթլիսի (Բաղեշ) գավառ՝ 75,000, Մուշի գավառ՝ 125,000, Գենջի գավառ՝ 25,000, Սղերդի գավառ՝ 30,000 հայ (տայն տեղում, էջ 530):

նագծման հանձնաժողովի քննարկումներում⁵²: Հանձնաժողովի անդամ Վահան Փափազյանը հետևյալ կերպ է ներկայացնում հարցի շուրջ ստեղծված տարակարծությունը. «Կիլիկեան» խումբը, գլխավորությամբ Եղիշե Արք. Դուրեանի, կը պնդէին Կիլիկեան եւս առնել մեր սահմաններուն մէջ: Ազգային-քաղաքա-նագմական, տնտեսական եւ մանաւանդ շատ մը փաստարկութիւններով, պէտք կը զգային պնդելու այդ պահանջին վրայ: Փրոֆ. Խաչատուրեանը, Թերզիպաշեանը եւ ես անիրագործելի կը համարէինք նման պահանջ: Կովկասեան սահմաններէն մինչեւ Միջերկրական երկարող 3000-է աւելի քիլոմէթր տարածութեան մէջ, 3 միլիոնէ աւելի մահմետականներ կ'ապրէին, թեւ ցանցառ թիով, իսկ հայեր գրեթէ չկային. պատմական տուեալներ ընդունելի չեն աշխարհի բախտը տնօրինողներու կողմէ. ասոնք ՆԵՐԿԱՆ (ընդգծումը հեղինակինն է- Ռ.Թ.) միշտ աչքի առաջ ունին. նոյն իսկ եթէ այդ հողամասը մեզի տրուէր, ի՛նչպէս կարելի էր լեցնել հայերով, մանաւանդ՝ ջարդերէ վերջ»⁵³:

Նշենք, որ պրոֆեսոր Տ. Խաչատուրյանի կողմից նաև պատրաստվել և Հայաստանի սահմանագծման հանձնաժողովի ուշադրությանն էր ներկայացվել «Հայաստանի սահմանները» գրությունը, որտեղ լայն անդրադարձ է արվում արևմտահայության թվաքանակի հարցին⁵⁴:

Փարիզի կոնֆերանսին Հայ ազգային պատվիրակության ներկայացրած հուշագրին և մասնավորապես դրանում զետեղված վիճակագրական տվյալներին փորձում է հակադարձել թուրքական կողմը: 1919 թ. մայիսին ժնկում լույս է տեսնում «Թուրքերն ու հայերը պատմության առջև. ռուսական և թուրքական նոր վկայություններ 1914-1918 թթ. հայկական վայրագությունների մասին. Հայկական պատվիրակության հուշագրի հերքումը» վերնագրով գրքույկը, որի հեղինակը՝ Շվեյցարիայում ապաստանած նախկին երիտթուրքական պետական պաշտոնյա Ռեշիդ Սաֆվետ Ատաբինենը (Reşit Safvet Atabinen), հանդես էր եկել Կարա Շեմսի կեղծանունով⁵⁵:

Իր գրքույկի՝ «Հայկական պատվիրակության կողմից Փարիզի խաղաղության վեհաժողովում ներկայացված հուշագրի կապակցությամբ» ենթաբաժնի հենց սկզբում հեղինակը փաստում է իր նպատակը՝ նշելով. «Հայկական պահանջները պարունակող հուշագրի քննությունը մեզ պարտավորության տակ է դնում ավելացնել որոշ վիճակագրական նկատառումներ, որոնք կհերքեն Նուբարի և Ահարոնյանի անկուշտ նկրտումները»⁵⁶:

⁵² Սահմանագծման հանձնաժողովի անդամներն էին Համագումարի պատվիրակներ պրոֆեսոր Տ. Խաչատուրյանը, Ա. Թերզիբաշյանը, Գ. Ֆնտգլյանը, Հովհաննես վարդապետ Թորոսյանը, Գ. Նորատունկյանը և Վահան Փափազյանը (տե՛ս Փափազեան Վ., *Իմ յուշերը*, հատոր երրորդ, Գահիրե, տպ. «Յուսսեթ», 1957, էջ 46):

⁵³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 246:

⁵⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 246:

⁵⁵ Տե՛ս Kara Schemsi, *Turcs et Arméniens devant l'histoire. Nouveaux témoignages russes et turcs sur les atrocités arméniennes de 1914 à 1918*, Geneve, Impr. Nat., 1919:

⁵⁶ Նույն տեղում, էջ 109:

Հայկական պատվիրակության ներկայացրած վիճակագրական տվյալների անվավերականությունը և Արևմտյան Հայաստանում հայերի՝ փոքրամասնություն լինելը «ապացուցելու» համար հեղինակը դիմում է մի հնարի, որը հետագայում բազմիցս օգտագործվել է թուրքական պաշտոնական պատմագրության կողմից, այն է՝ ցույց տալ, որ հայկական աղբյուրների վիճակագրությունը հերքվում է ոչ միայն թուրքական, այլ նաև արևմտյան՝ իբր թուրքականից անկախ տարբեր աղբյուրների կողմից⁵⁷:

Հեղինակը դիմում է արևմտահայության թվաքանակի վերաբերյալ տեղեկություններ պարունակող ֆրանսիական երկու աղբյուրի՝ Ֆրանսիայի արտգործնախարարության կողմից 1897 թ. հրատարակված «Դեղին գրքում»⁵⁸ զետեղված վիճակագրությանը⁵⁹ և արդեն մեզ հայտնի ֆրանսիացի վիճակագիր Վիտալ Քինեի «Ասիական Թուրքիա» գրքի տվյալներին: Երկու աղբյուրներում առկա տվյալների համեմատությունը վկայում է, որ Քինեի գիրքը որպես աղբյուր է ծառայել Ֆրանսիայի արտգործնախարարության «Դեղին գրքի» տվյալների համար⁶⁰: այդ իրողությունը թաքցնելու նպատակով Շեմսին դիմում է հետևյալ հնարին. «Դեղին գրքից» ներկայացնում է միայն Արևմտյան Հայաստանի վեց նահանգներում հայերի տոկոսային հարաբերակցության տվյալը, իսկ Վիտալ Քինեից վերցնում է արդեն վեց նահանգների հայերի և մահմեդականների թվերը: Հեղինակը որևէ կերպ չի նշում այն հանրահայտ իրողությունը, որ Վիտալ Քինեի տվյալներն ինքնուրույն արժեք չունեն, դրանց հիմքում ընկած են օսմանյան տվյալները՝ հիմնականում քաղված սալամաններից և պաշտոնական այլ աղբյուրներից⁶¹:

Հատկանշական է «Դեղին գրքի» և ընդհանրապես արևմտյան աղբյուրներից քաղված տվյալների նկատմամբ Շեմսիի դրսևորած ընտրողական մոտեցումը: Այսպես, նա շրջանցում է «Դեղին գրքում» զետեղված այն տվյալը, համաձայն որի XIX դ. վերջին Անատոլիայում (Փոքր Ասիա և Արևմտյան Հայաստան առանց Կ. Պոլսի և Եվրոպական Թուրքիայի տարածքի) բնակվող հայերի թիվը կազմում էր 1,475,011 շունչ⁶². դա հասկանալի կլինի, եթե մենք նկատի ունենանք, որ, ըստ

⁵⁷ Այսպես, Շեմսին մեջբերում է ակնհայտորեն օսմանյան աղբյուրներից ծագող 1917 թ. բրիտանական տարեգրքից քաղված տվյալ, որի համաձայն՝ 1913 թ. Փոքր Ասիան ուներ 11,384,700 բնակիչ, որից 8,975,700-ը՝ մահմեդականներ և 1,056,000-ը՝ հայեր, այդ թվում՝ «Արևելյան Անատոլիայում»՝ 1,795,800 մահմեդական, 480.000 հայ (բնակչության 1/5-ը) և «Արևմտյան Անատոլիայում»՝ 7,179,900 մահմեդական, 576,200 հայ (սույն տեղում, էջ 114):

⁵⁸ «Դեղին գրքեր» (livres jaunes) էին կոչվում դիվանագիտական փաստաթղթերի ժողովածուների պրակները, որոնք Ֆրանսիայի արտգործնախարարը ներկայացնում էր երկրի խորհրդարանի քննարկմանը):

⁵⁹ Տե՛ս *Documents diplomatiques: affaires arméniennes; projets de reforme dans l'Empire ottoman 1893-1897*, Paris, Imprimerie nationale, 1897.

⁶⁰ Դրա մասին ավելի մանրամասն հաջորդիվ:

⁶¹ Վիտալ Քինեի տվյալների բովանդակային քննության համար տե՛ս Գալստյան Հ. Հ., Արևմտյան Հայաստանի բնակչության ազգային կազմը՝ ըստ Վիթալ Քինեի վիճակագրության, «Մեր-ձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XII, Թուրքիա, Երևան, 1985, էջ 59-79:

⁶² Տե՛ս *Documents diplomatiques: affaires arméniennes; projets de reforme dans l'Empire ottoman 1893-1897...*, էջ 8:

1914 թ. վերաբերող օսմանյան տվյալների, ամբողջ կայսրության հայ բնակչության թիվը չէր գերազանցում 1,300,000-ը:

Շեմսիի կողմից վկայակոչվող հաջորդ աղբյուրը XIX դ. վերջին Վանում ոռոսական փոխհյուպատոսի պաշտոնը զբաղեցրած գեներալ Վլադիմիր Մանսկոյ Վանի և Բիթլիսի բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալներն են: Դրանք ևս հեղինակը ներկայացնում է ընտրողաբար. ցույց է տրվում միայն հայերի տոկոսային հարաբերակցությունը մահմեդականների համեմատությամբ. Վան՝ հայեր՝ 26%, քրդեր և թուրքեր՝ 46%, Բիթլիս՝ հայեր՝ 39%, քրդեր և թուրքեր՝ 55%⁶³: Թուրք պաշտոնյայի նպատակը պարզ է դառնում, երբ մենք ծանոթանում ենք Վ. Մանսկոյ թվային տվյալներին, որոնց համաձայն՝ Վանի նահանգում կար 13,735 և Բիթլիսի նահանգում՝ 23,326 տուն հայ⁶⁴: Ընտանիքների անդամների միջին թիվը Մանսկին ընդունում է 8 շունչ, ինչը Վանի նահանգի պարագայում տալիս է 109,880, Բիթլիսի նահանգում՝ 186,608 շունչ հայ բնակչություն: Նույն նահանգների հայ բնակչության համար 1914 թ. օսմանյան պաշտոնական տվյալներն են համապատասխանաբար՝ 67,792 և 119,132 շունչ⁶⁵: Այսինքն՝ հայ բնակչության թվաքանակի համար Մանսկոյ տվյալները, որոնք նա, ինչպես և Վ. Քինեն, քաղել է տեղական օսմանյան տարեգրքերից, օսմանյան կառավարության վիճակագրության համեմատ շուրջ 40%-ով բարձր թիվ են հաղորդում⁶⁶:

Իր կողմից թույլ տրված վերոնշյալ վիճակագրական խեղաթյուրումների արդյունքում Շեմսին հնարավորություն է ստանում եզրահանգելու հետևյալը. «Ինչպես տեսնում ենք, ինչ վիճակագրության էլ դիմենք՝ անգլիական, ֆրանսիական, ռուսական թե թուրքական, ցանկացած նահանգում հայկական տարրը ոչ միայն մեծամասնություն չէ, այլ անգամ 40% չի կազմում»⁶⁷:

⁶³ Kara Schemsi, *նշվ. աշխ.*, էջ 119:

⁶⁴ Տե՛ս *Сборникъ дипломатическихъ документовъ. Реформы въ Арменіи (26 ноября 1912 г.- 10 мая 1914 г.)*, Петроградъ, Гос. тип., 1915, էջ 284 և 288:

⁶⁵ Տե՛ս Karpat K., *նշվ. աշխ.*, էջ 188:

⁶⁶ Ի դեպ, Վ. Մանսկին, քննելով Քինեի տվյալները Վանի նահանգի վերաբերյալ, նշում է, որ դրանք նշանակալից անճշտություններ են պարունակում: Մասնավորապես հեղինակը գտնելով, որ Վանի գավառակի հայ բնակչության թվաքանակի վերաբերյալ Քինեի հաղորդած տվյալն իրականությունից ցածր է, ենթադրում է, որ այն վերաբերում է միայն գավառակի ցյուղերի ազգաբնակչությանը, իսկ Վան քաղաքի հետ միասին (ըստ Քինեի՝ 13,500) հայերի թիվը պետք է լինի՝ 26,000 (տե՛ս Маевский В.Т., *Ванский вилайетъ. Военно-статистическое описание*, Тифлисъ, Типъ. канцъ. Главноначальствъ. гражд. частью на Кавказъ, 1901, էջ 89-90): Շարունակելով Քինեի տվյալների քննությունը՝ ուսումնասիրողը կասկածի տակ է առնում նաև Վան քաղաքի վիճակագրությունը (13,500 հայ): Մանսկին, հիմնվելով իր սեփական դիտարկումների վրա, որոնք, ըստ նրա, հաստատվում էին անգամ թուրքական պաշտոնական տվյալներով, գտնում է, որ քաղաքի հայ բնակչության թիվը կազմում է 20-25 հազար (նույն տեղում, էջ 100-101):

⁶⁷ Տե՛ս Kara Schemsi, *նշվ. աշխ.*, էջ 119:

3. Արևմտահայության թվաքանակի հարցի արծարծումը օսմանյան կառավարության հետպատերազմյան հուշագրերում

Առաջին աշխարհամարտում կրած պարտությունից հետո հայկական պահանջներին հակահարված հասցնելու համար թուրքական կողմը որպես միջոց ընտրեց «ազգերի ինքնորոշման» վիլսոնյան սկզբունքների վկայակոչումը, և ըստ դրա՝ նոր օսմանյան իշխանությունները շարունակեցին առաջ տանել և զարգացնել Հայկական հարցում Արդուլ Համիդի և երիտթուրքական վարչակարգերի ավանդական գիծը, այն է՝ հայտարարել, որ անգամ Առաջին աշխարհամարտից առաջ հայերն Արևմտյան Հայաստանում աննշան փոքրամասնություն էին, և դարեր շարունակ գերակշռող էթնիկական-կրոնական տարրը «Արևելյան Անատոլիայում» կազմել են մահմեդականները⁶⁸: 1919–1920 թվականներին և՛ պաշտոնական, և՛ ոչ պաշտոնական թուրքական շրջանակները բազմաթիվ հուշագրեր և տեղեկագրեր հրատարակեցին՝ հասցեագրված Փարիզի հաշտության կոնֆերանսի մասնակիցներին, որոնցում առաջ էր քաշվում Օսմանյան կայսրության ամբողջականության պահպանման գաղափարը⁶⁹: Հայկական հարցի վերաբերյալ օսմանյան կառավարության դիրքորոշումը ներկայացնող նման փաստաթղթերից առաջինն ու թերևս ամենակարևորը 1919 թ. փետրվարի 12–ով թվագրված հուշագիրն է՝ ուղղված Կոստանդնուպոլսում Անտանտի երկրների ներկայացուցիչ գերագույն կոմիսարներին⁷⁰:

Փոքր Ասիայում և Արևմտյան Հայաստանում հույների և հայերի՝ որպես աննշան փոքրամասնություն լինելու դրույթի հիմնավորմանն է նվիրված բուն հուշագրի տեքստի (12 էջ) շուրջ մեկ չորրորդը: Բաժանելով Օսմանյան կայսրության տարածքը «ըստ Վիլսոնյան սկզբունքների» երկու մասի՝ «թուրքական» և «արաբական» նահանգների, և որպես «թուրքական» հռչակելով Արևելյան Թրակիայի, Փոքր Ասիայի (Անատոլիա) և Արևմտյան Հայաստանի նահանգները՝ հուշագրի հեղինակները դրանցից առանձնացնում էին «արևելյան» կամ «հայկական» վիլայեթները՝ դրանք քննության առնելով առանձին⁷¹:

Ներկայացնելով Արևելյան Թրակիայի և Փոքր Ասիայի վարչատարածքային միավորների անունները՝ հուշագրի հեղինակները հայտարարում էին, որ բոլոր այդ նահանգներում թուրքական տարրը ճնշող մեծամասնություն է կազմում, ինչպես դա վկայված է պաշտոնական վիճակագրության կողմից, ինչպես նաև նախքան պատերազմը Թուրքիայի ուսումնասիրությանը զբաղված օտարերկրացիների տվյալներով⁷²: Սա բացահայտ ապատեղեկատվություն էր, քանի որ հատկապես

⁶⁸ Տե՛ս Հովհաննիսյան Ռ.Գ., *Հայասրանի Հանրապետություն, հ. I, Առաջին փարիս, 1918-1919*, Երևան, «Տիգրան Մեծ» հրատ., 2005, էջ 462:

⁶⁹ Բացի Կարա Շենսիի արդեն վկայակոչված գրքից, տե՛ս նաև *Les Turcs Et Les Revendications Arméniennes*, Paris, L'Hoir, 1919; *The National Congress of Turkey, The Turco-Armenian Question. The Turkish Point of View*, Societe Anonyme de Papeterie et d'Imprimerie, 1919 և այլն:

⁷⁰ *Memorandum of the Sublime Porte Communicated to the American, British, French and Italian High Commissioners on the 12th February 1919*, Constantinople, Zellig Bros., 1919.

⁷¹ Նույն տեղում, էջ 4:

⁷² Նույն տեղում, էջ 5:

Արևմտյան Հայաստանի Վանի, Բիթլիսի, Դիարբեքիի և Խարբերդի նահանգներում մահմեդական բնակչության մեջ քրդերն ավելի մեծ թիվ էին կազմում թուրքերի համեմատ:

Ի հաստատումն վերոնշյալ պնդման՝ ներկայացվում են երեք աղբյուր՝ 1914 թ. դրությունն արտացոլող օսմանյան պաշտոնական, ֆրանսիացի վիճակագիր Վիտալ Քինեի (1890-ական թթ. սկիզբ) և «Դեղին գրքից» (1897 թ.) քաղված տվյալները: Վերջին երկու աղբյուրների տվյալներն իրարից գրեթե չեն տարբերվում, քանի որ ֆրանսիական կառավարությունը «Դեղին գիրքը» կազմելիս առանց որևէ էական փոփոխության վերցրել և զետեղել է այնտեղ Քինեի տվյալները, սակայն թուրքական հուշագրի հեղինակները որևէ կերպ դրա մասին չեն նշում: Ինչպես արդեն արձանագրել էինք, որ իրենց հերթին Քինեի տվյալների հիմքում ընկած էր նույն օսմանյան պաշտոնական վիճակագրությունը, ուստի հուշագրի հեղինակներն ըստ էության օսմանյան տվյալների իսկությունը հաստատում էին այլ անվան տակ ներկայացվող նույն օսմանյան տվյալների միջոցով:

Նույն հնարն օգտագործվում էր նաև Արևմտյան Հայաստանի վեց նահանգների (Վան, Բիթլիս, Խարբերդ, Դիարբեքի, Էրզրում, Մեքաստիա) պարագայում. սկզբում ներկայացվում էին օսմանյան պաշտոնական, իսկ այնուհետև՝ «Դեղին գրքից» քաղված վիճակագրական տվյալները (տե՛ս ստորև)⁷³.

Վեց նահանգների պաշտոնական վիճակագրություն

	Բնակչության թիվ	Համամասնություն
Մահմեդականներ	3,040,891	79%
Հայեր	636,306	16.5%
Այլ	162,352	4.5%

«Դեղին գրքի» վիճակագրություն

	Բնակչության թիվ	Համամասնություն
Մահմեդականներ	2,669,386	73.5%
Հայեր	666,435	18.5%
Այլ	272,581	7.5%

Պատճառաբանությամբ, որ «հայկական շրջաններում միտում կա հավակնելու Ադանայի (Կիլիկիա) և Տրապիզոնի նահանգների որոշ տարածքների», հուշագրում առանձին ներկայացվում էր այդ նահանգների բնակչության վիճակագրությունը՝ նույնպես ըստ օսմանյան պաշտոնական և «Դեղին գրքի» տվյալների⁷⁴.

⁷³ Նույն տեղում, էջ 7:

⁷⁴ Նույն տեղում:

Պաշտոնական վիճակագրություն

Տրապիզոն		
Մահմեդականներ	1,187,078	78%
Հայեր	68,813	4.5%

Ադանա		
Մահմեդականներ	443,937	85.9%
Հայեր	58,027	11.2%

«Դեղին գրքի» վիճակագրություն

Տրապիզոն		
Մահմեդականներ	806,700	77%
Հայեր	47,200	4.5%

Ադանա		
Մահմեդականներ	234,450	58%
Հայեր	97,450	24%

Հայկական պահանջների դեմ պայքարելու համար հուշագրի հեղինակները կարիք զգացին ներգրավել ևս մեկ արևմտյան աղբյուր՝ «Բրիտանիկա» հանրագիտարանը (1910 թ. հրատարակություն)՝ զետեղելով դրանից քաղված վիճակագրական տվյալներ: Ըստ հանրագիտարանի տվյալների. «հայերը, եթե անգամ վերցնենք ամենաբարյացակամ գնահատականները, մեծամասնություն են կազմում [Արևմտյան Հայաստանի 6 նահանգների – Ռ.Թ.] 159 գավառակներից (կազա) միայն 9-ում (7-ը՝ Վանի, 2-ը՝ Մուշի մոտ)»: Նշվում էր, որ 1896 թ. ինը թուրքական նահանգների՝ Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ (Մամուրեթ–ուլ–Ազիզ), Դիարբեքիր, Սեբաստիա, Հալեպ, Ադանա և Տրապիզոն, բնակչությունը մոտ 6,000,000 էր, որից

Հայեր	919,875	կամ 15%
Այլ քրիստոնյաներ	632,875	կամ 11%
Մահմեդականներ	4,453,250	կամ 74%

Ըստ «Բրիտանիկա» հանրագիտարանի՝ առաջին հինգ նահանգներում (Էրզրում, Վան, Բիթլիս, Խարբերդ (Մամուրեթ–ուլ–Ազիզ), Դիարբեքիր), որոնք ընդգրկում են հայերի մեծ մասը, բնակչության թիվը 2,642,000 էր, որից՝

Հայեր	633,250	կամ 24%
Այլ քրիստոնյաներ	179,875	կամ 7%
Մահմեդականներ	1,828,870	կամ 69%

«Վերոնշյալ թվերը կասկած չեն թողնում, – եզրափակում էին թուրքական հուշագրի հեղինակները, – որ վերոնշյալ նահանգների բնակչության ճշշող մեծամաս-

նությունը կազմված է մահմեդականներից, իսկ հայերն ամենուրեք աննշան փոքրամասնություն են»⁷⁵:

Թուրքական հուշագրում գետեղված տվյալների համեմատությունը «Բրիտանիկա» հանրագիտարանի բուն տեքստի հետ ի հայտ է բերում ուշագրավ հանգամանքներ: Այսպես, հուշագրի հեղինակներն օգտագործել են աղբյուրը ընտրողաբար՝ բաց թողնելով թուրքական տեսակետի համար ոչ նպաստավոր ձևակերպումներ: Օրինակ, բաց է թողնված «Բրիտանիկայի» հոդվածի ենթաբաժնի հենց սկզբում արված այն պնդումը, որ Օսմանյան Թուրքիային վերաբերող «ճշգրիտ վիճակագրություն գտնել հնարավոր չէ» (accurate statistics cannot be obtained), ինչպես նաև բուն սկզբնաղբյուրը, որին հղում է կատարում «Բրիտանիկա» հանրագիտարանը՝ ռուս գեներալ Ջեյոնիի տվյալները⁷⁶: Ջեյոնիի տվյալների քննությունը փաստում է, որ ռուս ուսումնասիրողն իր հերթին որպես աղբյուր օգտագործել է նույն ինքը՝ ...Վիտալ Քինեի տվյալները՝ 1895 թ. պատրաստելով Թուրքական Հայաստանում և Քուրդիստանում հայ բնակչության տեղաբաշխման քարտեզը՝ ըստ Վիտալ Քինեի «Ասիական Թուրքիա» (1890-1894) աշխատության տվյալների, և կից բացատրագիրը⁷⁷: Այսինքն՝ թուրքական հուշագրի հեղինակները փորձում էին ապացուցել արևմտահայության թվաքանակի վերաբերյալ օսմանյան պաշտոնական վիճակագրական տվյալների հավաստիությունը նույն օսմանյան պաշտոնական տվյալների վրա հիմնված Վիտալ Քինեի տվյալների միջոցով, այնուհետև՝ Վիտալ Քինեի տվյալների վրա հիմնված ֆրանսիական արտգործնախարարության «Դեղին գրքի» միջոցով և վերջապես նույնպես Վիտալ Քինեի տվյալների վրա հիմնված «Բրիտանիկա» հանրագիտարանում գետեղված վիճակագրությամբ: Նման վիճակագրական աճապարարության միջոցով ստեղծվում էր այն պատրանքը, որ օսմանյան պաշտոնական վիճակագրական տվյալներն իբր հաստատվում են արևմտյան աղբյուրների կողմից:

«Բրիտանիկա» հանրագիտարանի տվյալները ներկայացնելուց հետո հուշագրի հեղինակներն իրենց իրավունք են վերապահում կրկնել Արևմտյան Հայաստանի նկատմամբ նույն միտքը, որը հնչեցվել էր Փոքր Ասիայի պարագայում՝ հայտարարելով հետևյալը. «Ահա այսպիսին են փաստերը և մահմեդականների ու հայերի հարաբերակցությունը ցույց տվող վերոնշյալ վիճակագրությունը. ուստի այս նահանգներում բնականոն ու արդար վիճակ հաստատելու համար նպատակահարմար է քննարկել տարբեր լուծումներ»⁷⁸: Թուրքական կառավարության վիճակագրական տվյալները կոչված էին ապացուցելու, որ «Մեծ Հայաստանի»

⁷⁵ Նույն տեղում, էջ 8:

⁷⁶ Տե՛ս *Encyclopedia Britannica*, 11th edition, New York, 1910, vol. 2, էջ 564:

⁷⁷ Տե՛ս Пояснительная записка генер. штаба Генераль-Лейтенанта Зеленого (съ приложеніями) к картѣ распредѣленія армянскаго населенія въ Турецкой Арменіи и Курдистанѣ по казамъ и данныя сочиненія V. Cuinet “la turquie d’Asie” 1890-94 г., составленной ген. штаба Ген.-Лейт. Зеленымъ и Подполк. Сысоевымъ, 1895, «Записки Кавказскаго отдѣла Императорскаго Русскаго географическаго общества», Книжка XVIII, Тифлисъ, Типографія Грузинскаго Издательскаго Товарищества, 1896, էջ 1-40:

⁷⁸ *Memorandum of the Sublime Porte...*, էջ 9:

ստեղծումը հակասում է վիստոնյան սկզբունքներին, «հինգ միլիոնանոց» մահմեդական բնակչությունը չպետք է կառավարվի «մի քանի հարյուր հազար» հայերի կողմից, ինչը, ըստ հուշագրի հեղինակների, անխուսափելիորեն հանգեցնելու է ներքին խժոժությունների և արյունալի բախումների⁷⁹: Որպես նախընտրելի լուծում թուրքական կառավարությունն առաջարկում էր թողնել տարածքները թուրքական տիրապետության տակ՝ որոշ չափով ընդլայնելով Հայաստանի Հանրապետության տարածքը Հայոց ցեղասպանությունը վերապրած («Դեր Զորի սանջակ տեղահանված») հայերին վերաբնակեցնելու նպատակով⁸⁰: Վերջին առաջարկության առումով Թուրքիային տեսականորեն չէր սպառնում մեծ տարածքների կորուստ, քանի որ Առաջին աշխարհամարտի ավարտը սիրիական անապատներում կարողացել էր վերապրել ընդամենը մոտ 250,000-300,000 բռնագաղթված հայ⁸¹:

Հայկական կողմի արձագանքը թուրքական հուշագրին ևս չի հապաղում: Նույն 1919 թ. Կոստանդնուպոլսում ֆրանսերենով լույս է տեսնում «Պատասխան Բարձր Դռան 1919 թ. փետրվարի 12-ի հուշագրին» պրակը: Քառասուն էջից բաղկացած գրության շուրջ մեկ չորրորդը նվիրված էր թուրքական հուշագրում զետեղված վիճակագրական տվյալների և ժողովրդագրական փաստարկների հերքմանը, իսկ թվով հինգ հավելվածում տրվում էին տարբեր վիճակագրություններ⁸²:

Հայկական պատասխանում ներկայացվում էին մահմեդականներին մեծամասնություն դարձնելու նպատակով օսմանյան կառավարության 1878-1914 թթ. վարչա-ժողովրդագրական քաղաքականության հիմնական տարրերը, որոնք էին.

- 1) Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի նահանգների վարչական սահմանների վերաձևումները, երբ հայաբնակ գավառներին միացվում էին առավելապես մահմեդաբնակ շրջաններ (օրինակ՝ Հաքյարին՝ Վանի գավառին, Միջագետքից շրջաններ՝ Դիարբեքիի նահանգին, Կիլիկիայի բնականոն մաս կազմող հայաբնակ Մարաշի գավառի միացումը Հալեպի գավառին, մահմեդաբնակ Իչիլի շրջանի միացումը հայաբնակ Ադանայի նահանգին և այլն),
- 2) հայաբնակ շրջաններում Կովկասից և Բալկաններից գաղթած մահմեդական վերաբնակիչների (հայտնի են «մուհաջիրներ» անվամբ) տեղավորումը, նորաբնակների կողմից հայերին ահաբեկելը և անխնա շահագործելը (ներկայացվում էին նաև թուրքական պաշտոնական աղբյուրներից քաղված տվյալներ. 1878-1908 թթ. ընթացքում Օսմանյան կայսրություն էին տեղավիժվել և վերաբնակեցվել 854,000 մուհաջիր, և նշվում էր, որ 1908-11 թթ. և հատկապես 1912-14 թթ. Բալկանյան պատերազմների ընթացքում մուհաջիրների հոսքն էլ ավելի մեծ թափ էր ընդունել),
- 3) արդեն իսկ կեղծված վիճակագրության էլ ավելի աղավաղված հրապարակումը,

⁷⁹ Նույն տեղում:

⁸⁰ Նույն տեղում:

⁸¹ Ըստ թուրք հետազոտող Ֆ. Դյունդարի հաշվարկների՝ 300,000 (տե՛ս Dundar Fuat, *Crime of Numbers, The Role of Statistics in the Armenian Question*, The State University of New Jersey-Rutgers, Transactions Publishers, 2010, էջ 150-151):

⁸² Տե՛ս *Reponse au Memoire de la Sublime-Porte en date du 12 fevrier 1919*, Constantinople, 1919:

երբ ոչ միայն թուրքախոսների, այլև բոլոր իսլամադավան ցեղերի, անգամ նրանց, որոնք ոչ իսլամադավան և ոչ էլ քրիստոնեադավան են, տվյալները միավորվում էին մեկ՝ «մահմեդականներ» բաժնի մեջ, իսկ հայերը բաժանվում էին երեք մասի՝ առաքելադավան, կաթոլիկներ և բողոքականներ⁸³:

Վերոնշյալ տեսական դրույթների ներկայացումից հետո անդրադարձ էր արվում թուրքական հուշագրում զետեղված որոշակի վիճակագրական տվյալներին: Քանի որ հուշագրի աղբյուրներից մեկը Վիտալ Քինեն էր, հայկական պատասխանում նրա «Ասիական Թուրքիա» գրքից մեջբերումների միջոցով ցույց էր տրվում, որ հենց ինքը՝ ֆրանսիացի վիճակագիրը, բացահայտ քննադատում է օսմանյան վիճակագրությունը: Մասնավորապես, Վիտալ Քինեն գրում էր. «Պատշաճ պաշտոնական վիճակագրություն Թուրքիայում բացարձակապես բացակայում է», «...[Թուրքական] իշխանությունները ոչ միայն չեն ընդգրկել այսքան հետաքրքիր և օգտակար վիճակագրություն գիտությունը երկրի սովորույթների մեջ, այլև ընդհակառակը, որպես շահագրգիռ կողմ, հրաժարվում են արտոնել անգամ թեթև ուսումնասիրություններ»⁸⁴:

Պրակի հեղինակները նաև ներկայացնում էին Քինեի տվյալներում առկա էական անճշտությունների և հակասությունների մի քանի օրինակ՝ եզրակացնելով, որ դրանք արտացոլում են օսմանյան պաշտոնական տվյալների ոլորտում տիրող ընդհանուր անմխիթար վիճակը⁸⁵:

Այնուհետև հայկական պատասխանի հեղինակներն անդրադառնում էին օսմանյան կառավարության հուշագրում ներկայացված օսմանյան պաշտոնական տվյալներին: Մասնավորապես նշվում էր, որ հայտնի չէ, թե ինչ եղանակով է այն կազմվել, թվերը երևակայական են, քանի որ Թուրքիայում կանոնավոր վիճակագրական համակարգ գոյություն չունի, և կառավարությունը երբեք զերծ չի մնում էլ ավելի խեղաթյուրելուց այն մտավոր տվյալները, որոնք առկա են իր տրամադրության տակ⁸⁶:

4. ԱՄՆ փորձագետների և հետպատերազմյան առաքելությունների անդրադարձները արևմտահայության թվաքանակի հարցին

Օսմանյան կայսրության տարածքների ճակատագիրը որոշելու համար Առաջին աշխարհամարտում հաղթանակած դաշնակից տերությունները կարիք ունեին տարբեր տեղեկությունների և առաջին հերթին խնդրո առարկա տարածքներին վերաբերող ժողովրդագրական տվյալների: Հարցը բարդանում էր այն հանգամանքով, որ հայկական և օսմանյան շրջանակներից ստացվող տվյալները միմյանց հակասում էին, ինչը ստիպում էր դրանց առնչվող արևմտյան երկրների ներկա-

⁸³ Նույն տեղում, էջ 14-17:

⁸⁴ Նույն տեղում, էջ 40:

⁸⁵ Նույն տեղում, էջ 18:

⁸⁶ Նույն տեղում:

յացուցիչներին որոշակի դիրքորոշում որդեգրել հարցի նկատմամբ՝ մերժել կամ ընդունել կողմերից մեկի փաստարկներն ու տվյալները, կամ էլ հանդես գալ սեփական հաշվումներով:

Հայաստանի սահմանների և դրան առնչվող Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի հարցը գտնվել է հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգների հետաքրքրությունների ոլորտում, քանի որ այն ուղղակիորեն առնչվում էր այդ պետության կողմից Հայաստանի մանդատը ստանձնելու նպատակահարմարության և հնարավորության հարցը պարզելուն: Դեռևս 1917 թ. սեպտեմբերին ԱՄՆ–ի նախագահ Վուդրո Վիլսոնի հրահանգով ստեղծվեց Տեղեկատու փորձագիտական խումբ (The Inquiry), որի նպատակն էր տվյալներ հավաքել Առաջին աշխարհամարտի ավարտից հետո ապագայում կայանալիք հաշտության բանակցությունների համար: Հայաստանի և հայերի վերաբերյալ տեղեկությունների հավաքման գործը դրված էր խմբի՝ Արևմտյան Ասիայի բաժնի (Western Asia section) վրա, որը բաղկացած էր 10 փորձագետներից⁸⁷: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո հետազոտական խմբի և այդ թվում՝ Արևմտյան Ասիայի բաժնի անդամներն ընդգրկվեցին Փարիզի հաշտության վեհաժողովի ամերիկյան պատվիրակության կազմ⁸⁸:

Տեղեկատու փորձագիտական խմբի արխիվում պահվում է Հայկական հարցին առնչվող 98 անուն փաստաթուղթ՝ հիմնականում փորձագիտական խմբի անդամների զեկույցներ, ինչպես նաև ամերիկյան միսիոներների տեղեկագրեր: Տվյալ փաստաթղթերից 13-ն առնչվում են Օսմանյան Թուրքիայի բաժանման հարցին և 11-ը՝ ազգային ու կրոնական փոքրամասնություններին: Վերոնշյալ փաստաթղթերից շատերում այս կամ այն կերպ արծարծվում է արևմտահայության թվաքանակի հարցը⁸⁹: Տեղեկատու փորձագիտական խմբի կողմից ծավալուն զեկույցներ էին պատրաստվել նաև Օսմանյան կայսրության տարբեր, այդ թվում՝ նաև Արևմտյան Հայաստանի նահանգների վերաբերյալ, որոնք ևս վիճակագրական տվյալներ էին պարունակում⁹⁰:

Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակին առնչվող Տեղեկատու փորձագիտական խմբի պատրաստած փաստաթղթերից հիշարժան է Արև-

⁸⁷ St' u Gelfand Lawrence E., *The Inquiry; American Preparations for Peace, 1917-1919*, New Haven, Yale University Press, 1963, էջ 60:

⁸⁸ St' u Hovhannisian Richard G., *The Armenian Genocide and US post-war commissions*, Winter Jay, ed., *"America and the Armenian Genocide of 1915"*, Cambridge, Cambridge University Press, 2003, էջ 259.

⁸⁹ Ըստ սիյուրքահայ հետազոտող Արմեն Հովհաննիսյանի տվյալների (տե՛ս Hovhannisian Armen K. *The United States Inquiry and the Armenian Question, 1917-1919: The archival papers*, "Armenian Review," 1984, vol.37, № 1, էջ 148):

⁹⁰ Հարցման փորձագիտական խմբի՝ Թուրքիային առնչվող փաստաթղթերի ամբողջական ցանկը տե՛ս *National Archives Inventory 9: Records of the American Commission to Negotiate Peace, Inventory of Record Group 256*, Compiled by Sandra K. Rangel, National Archives and Records Service Administration, Washington, 1974, էջ 81-92 (հասանելի է անցանց՝ <http://www.archives.gov/research/foreign-policy/related-records/inventory9.pdf>).

մոյան Ասիայի բաժնի անդամ, պրոֆեսոր Դևիդ Մաժիի (David Magie) հեղինակած «Ասիական Թուրքիայի բնակչությունը պատերազմի նախօրյակին» (“Population of Asiatic Turkey at the outbreak of the war”) 1918 թ. նոյեմբերի 15–ով թվագրվող տեղեկագիրը, որը շրջանառության մեջ է դրվում Փարիզի հաշտության վեհաժողովի ընթացքում և իր հերթին օգտագործվում է Հայկական հարցին առնչվող տարբեր գեկուցագրերի և տեղեկագրերի կազմման ժամանակ⁹¹:

Տվյալ խմբի Հետախուզական բաժինը 1919 թ. հունվարի 21-ով թվագրված իր հանձնարարականներում նշում էր, որ հայկական պետության ստեղծումը բարդ գործ է, քանի որ «բացի Վանա լճից հյուսիս ընկած փոքր տարածությունից, Կարսից և Երևանից հայերն ամենուրեք փոքրամասնություն են՝ կազմելով բնակչության ոչ ավել, քան 30 կամ 35 տոկոսը»: Ամերիկացի փորձագետներն այն կարծիքին էին, որ բնակչության չափորոշիչը Հայաստանի դեպքում չպետք է կիրառվի՝ հաշվի առնելով դժվարությունները, որոնք բաժին են հասել հայերին, ինչպես նաև կոտորածների արդյունքում նրանց թվաքանակի նվազումը⁹²:

Օսմանյան կայսրության տարածքներում տիրող վիճակն ուսումնասիրելու, այդ պետության նկատմամբ ԱՄՆ–ի քաղաքականությունը որոշելու նպատակով ամերիկյան կառավարությունը 1919 թ. տարածաշրջան է ուղարկում երկու հանձնախմբեր կամ առաքելություններ, որոնք հայտնի են դրանք ղեկավարող անձանց՝ Քինգ–Քրեյնի⁹³ և Հարբորդի անուններով⁹⁴: Քինգ–Քրեյնի առաքելությունը կազմված էր քաղաքացիական անձանցից, և նրա նպատակն ամբողջ Օսմանյան կայսրության տարածքների ուսումնասիրությունն էր, Հարբորդի առաքելությունը

⁹¹ Մաժիի տեղեկագրի մասին տե՛ս *National Archives Inventory 9: Records of the American Commission to Negotiate Peace, Inventory of Record Group 256...*, էջ 83: Տեղեկագրից օգտվել է Մեծ Բրիտանիայի արագործնախարարությունը, ինչի մասին հաշորդիվ (տե՛ս Zamir Meir, *Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919*, “*Middle Eastern Studies*,” vol. 17, № 1, Jan., 1981, էջ 87):

⁹² “Outline of Tentative Report and Recommendations by the Intelligence Section, in Accordance with Instructions for the President and the Plenipotentiaries”, 1041-1043. Մեջբերվում է ըստ Gidney James B., *A Mandate for Armenia*, Kent State University Press, 1967, էջ 78:

⁹³ Իր անունը ստացել է երկու անդամներից, որոնք են՝ աստվածաբան Հենրի Քինգը և ԱՄՆ–ի Դեմոկրատական կուսակցության գործիչ Չարլզ Քրեյնը: Այն իր աշխատանքները սկսել է 1919 թ. հունիսին և պատրաստել է իր գեկույցը 1919 թ. օգոստոսի 28–ին: Քինգ–Քրեյնի հանձնախմբի գործունեության մասին մանրամասն տե՛ս Gidney James, *նշվ. աշխ.*, էջ 136-167:

⁹⁴ Հարբորդի զինվորական առաքելությունը, որի կազմում կար ավելի քան 50 մարդ, գլխավորել է ամերիկյան բանակի գեներալ Ջեյմս Հարբորդը: Նրա առաջ խնդիր էր դրվել «հետազոտել և գեկուցագիր ներկայացնել այն շրջանների քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ պայմանների մասին, որոնք կարող էին հետաքրքրություն ներկայացնել Ամերիկայի համար...»: Առաքելությունն այցելել է Թուրքիա (Կոնստանդուպոլիս, Մերաստիայի, Խարբերդի, Էրզրումի նահանգներ), Հայաստանի Առաջին հանրապետություն, ինչպես նաև Թիֆլիս, Բաքու, Բաթում: Առաքելության գործունեության արդյունքներն ամփոփվել են «Մերձավոր Արևելքի իրավիճակը» գեկուցագրում, որը ներկայացվել է ԱՄՆ–ի նախագահին 1919 թ. հոկտեմբերի 23–ին և հանձնվել է ԱՄՆ–ի կոնգրեսին քննարկման համար 1920 թ. ապրիլին (տե՛ս Hovhannesian Richard G., *The Armenian Genocide and US post-war commissions...*, էջ 265. առաքելության գործունեության մասին հայաստանյան պատմագրության անդրադարձներից տե՛ս Սողոմոնյան Ա. Ջ., Հարբորդի զինվորական առաքելությունը և Հայաստանի մանդատը, «*Լրաբեր հասարակական գիտությունների*», 1985, № 9, էջ 13-23):

կազմված էր հիմնականում զինվորականներից, և նրա առաջնային նպատակը տարածաշրջանում իրավիճակի քննության առնելն էր՝ հատկապես Հայաստանի մանդատի հարցի ստանձնման հնարավորությունից ելնելով: Այս հանձնախմբերն իրենց աշխատանքների արդյունքում զեկուցագրեր են կազմում, որոնցում որոշակի տեղ էր հատկացված Մեծ եղեռնի նախօրյակին Արևմտյան Հայաստանի հայ բնակչության թվաքանակի, մուսուլմանների նկատմամբ հայերի տոկոսային հարաբերակցության հարցերին:

Քինգ-Քրեյնի առաքելության զեկուցագիր⁹⁵. Ինչպես և սպասելի է, զեկույցի հեղինակներին Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի հարցը հետաքրքրում է «անջատ Հայաստանի» ստեղծման խնդրի առումով: Այսպես, Օսմանյան կայսրությունից անջատված որոշ տարածքների վրա հայկական պետություն ստեղծելու հիմքերը նշելուց հետո հեղինակներն անցնում էին ապագա Հայաստանի սահմանների հարցին՝ նախ մերժելով «Մեծ Հայաստանի» (Արևմտյան Հայաստանի վեց նահանգներ՝ բացառությամբ հարավային և արևմտյան գավառների, Կիլիկիա, Տրապիզոն) ստեղծման գաղափարը և որպես առաջին պատճառ մատնանշելով հետևյալը. «1914-ին և անգամ նախքան 1894 թ. հայերը նշված տարածքում փոքրամասնություն էին կազմում՝ հավանաբար երբեք չգերազանցելով 25%-ը: Եթե նրանց այդ տարածքը վերահսկելու իրավունք տրվի, ապա բնակչության մեծամասնությունը իրեն վիրավորված կզգա՝ ի խախտումն բոլոր «Վիլսոնյան սկզբունքների» և պատերազմի նպատակների: Եթե անգամ հաշվի առնենք զոհված մեկ միլիոն հայերին⁹⁶ և ենթադրելով, որ նրանց բոլորին հնարավոր կլիներ հավաքել այս տարածքում, մինևույն է, հայերը կկազմեին բնակչության միայն շուրջ մեկ երրորդը»⁹⁷:

Զեկույցի հեղինակները պաշտպանում էին այսպես կոչված «փոքր Հայաստանի» ստեղծումը, որին Օսմանյան կայսրության տարածքից կփոխանցվեն միայն աշխարհագրական առումով Հայկական լեռնաշխարհին պատկանող տարածքների մի մասը՝ ելքով դեպի Սև ծով՝ մոտավորապես համապատասխան այն տարածքին, որը գրավվել էր ռուսական զորքերի կողմից Առաջին աշխարհամարտի ընթացքում: Ի հիմնավորումն իրենց այս տեսակետի՝ նորից որպես առաջին փաստարկ վկայակոչվում էր ժողովրդագրությունը. «Թուրքերն ու քրդերը չեն կարողանա արդարացի դժգոհություն հայտնել նման տարածքի վերաբերյալ, քանի որ սա պատմական Հայաստան է, և նաև այն պատճառով, որ եթե մահացած միլիոն հայերին հնարավոր լիներ վերականգնել և բերել այդ տարածք, հայերը կկազմեին բնակչության կեսը»⁹⁸:

⁹⁵ Քինգ-Քրեյնի զեկույցն ամբողջությամբ տե՛ս United States Department of State, *Papers relating to the foreign relations of the United States, The Paris Peace Conference, 1919*, Vol. XII, U.S. Government Printing Office, 1947, էջ 751- 863:

⁹⁶ Զեկույցի հեղինակները նկատի ունեն 1894-1896 թթ. համիդյան կոտորածներին և Մեծ եղեռնին զոհ գնացած հայերի թիվը:

⁹⁷ Նույն տեղում, էջ 821:

⁹⁸ Նույն տեղում, էջ 822:

Զեկույցի՝ «Հայկական պետության բնակչության թվաքանակի հաշվարկները» (Estimates of the Population of an Armenian State) վերնագիրը կրող ենթաբաժնում ապագա հայկական պետության ենթադրվող տարածքի բնակչության թվաքանակի մի քանի աղյուսակներ էին զետեղվել: Դրանցից առաջինն արտացոլում էր 1914 թ. դրությամբ: Վիճակագրությունը տրված էր երեք պայմանական շրջանների համար՝ «մեծ Թուրքական Հայաստան» (մոտավորապես ընդգրկում է վեց նահանգները՝ բացառությամբ հարավային և արևմտյան գավառների, Տրապիզոնի նահանգի արևելյան հատվածը և Կիլիկիան (Ադանայի նահանգ և Մարաշի սանջակ), «փոքր Թուրքական Հայաստան» (մոտավորապես համապատասխանում էր 1917 թ. ռուսական զորքերի զբաղեցրած տարածքին, այն է՝ Տրապիզոնի նահանգի արևելյան հատվածը, Վանի նահանգն առանց Հաքյարիի, Էրզրումի նահանգն ամբողջությամբ և Բիթլիսի նահանգն առանց Սղերդի) և «դիֆերենցիալ տարածքներ», այն տարածքները, որոնք կմնան «Փոքր Հայաստանը» «Մեծ Հայաստանից» առանձնացնելուց հետո (Խարբերդի նահանգը, Սեբաստիայի նահանգի արևելյան շրջանները և Կիլիկիան (Ադանայի նահանգ և Մարաշի սանջակ):

Աղյուսակ 4.

	%	Մահմեդականներ	%	Հայեր	%	Հույներ	%	Այլ	Ընդամենը
Մեծ Թուրքական Հայաստան	71	3,073,000	21 ^{1/2}	933,000	6 ^{1/2}	289,000	1	34,000	4,329,000
Դիֆերենցիալ տարածքներ	73	1,697,000	20	461,000	6	136,000	1	18,000	2,312,000
Փոքր Թուրքական Հայաստան	68	1,376,000	23 ^{1/2}	472,000	7 ^{1/2}	153,000	1	16,000	2,017,000

Զեկույցի հեղինակները ծանոթագրության կարգով նշում էին, որ վերոնշյալ աղյուսակը կազմվել է դոկտորներ Մաժիի և Վեպերմանի պատրաստած վիճակագրության հիման վրա: Կարևորություն է ներկայացնում զեկույցի հեղինակների նաև այն դիտարկումը, որ Մաժիի տվյալները կարող են թերագնահատել (underestimate) որոշ շրջանների համար հայ բնակչության թիվը⁹⁹: Զեկույցի հեղինակները նաև գտնում էին, որ Թուրքիայի տարբեր տարրերի թվաքանակի վերաբերյալ հնարավոր չի լինի որոշակի որևէ բան ասել այնքան ժամանակ, մինչև անկողմնակալ վերահսկողության տակ չանցկացվի գիտական ազգագրական ուսումնասիրություն¹⁰⁰: Նշենք, որ արևմտյան դիվանագետների և ուսումնասիրողների կողմից Արևմտյան Հայաստանի ժողովրդագրության առնչությամբ նույնան-

⁹⁹ Նույն տեղում, էջ 825:

¹⁰⁰ Նույն տեղում:

ման պնդումներ էին արվում սկսած 1878 թ.–ից Հայկական հարցի նախորդ փուլերում ևս¹⁰¹:

Հարթորդի գինվորական առաքելության զեկուցագրում արձանագրվում էր, որ, համաձայն պահպանողական հաշվարկների, 1914 թ. Ասիական Թուրքիայի տարածքում (առանց Կ. Պոլսի և Ադրիանապոլսի նահանգի) բնակվել է ավելի քան 1,500,000 հայ, «թեև այլք առավել բարձր թիվ են տալիս»¹⁰²: Նշվում էր, որ թուրքական կառավարության պաշտոնական տեղեկագրերը վկայում են, որ 1915-ին տեղահանության է ենթարկվել մոտ 1,100,000 հայ: Թուրքական իշխանությունների հակահայկական գործողությունների ընթացքը հակիրճ ներկայացնելուց հետո զեկուցագրում նշվում էր, որ հայ ազգի նկատմամբ այս «մահափորձին» գոհ է գնացել տարբեր հաշվարկներով 500,000–ից մինչև մեկ միլիոն մարդ, «առավել տարածում ստացած թիվը մոտ 800,000 է»¹⁰³:

Զեկուցագրի հեղինակների կարծիքով. «...անգամ նախքան պատերազմը հայերը, բացառությամբ մի քանի տեղերի, հեռու էին Թուրքահայաստան համարվող տարածքում մեծամասնություն կազմելուց»: «Այսօր մենք կասկածում ենք, արդյոք նրանք մեծամասնություն կկազմե՞ն անգամ մեկ առանձին բնակավայրում, եթե անգամ կոտորածների և տեղահանությունների վերջին վերապրածները վերադառնան տարածք, թեև, – հավելվում էր զեկուցագրում,– թուրքական բնակչության մեջ մեծ կորուստները որոշ չափով չեզոքացնում են սպանդի հետևանքով առաջացած տարբերությունը»¹⁰⁴:

Որոշակի հետաքրքրություն են ներկայացնում 1919 թ. դրությամբ Թուրքահայաստանում (Մերաստիայի արևելյան շրջանները՝ ներառյալ Շապին–Գարահիսարի գավառը, Կիլիկիան (Ադանայի նահանգ, Մարաշի սանջակ և Այնթապի գավառակ), Խարբերդի նահանգը, Դիարբեքիի նահանգի հյուսիսային հատվածը, Բիթլիսի նահանգն առանց Սղերդի գավառի, Վանի նահանգը (առանց Հաքյարիի գավառի), Էրզրումի և Տրապիզոնի նահանգները) բնակվող հայերի և Անդրկովկասում արևմտահայ փախստականների թվաքանակի վերաբերյալ զեկուցագրի հեղինակների գնահատականը. «Մենք գտնում ենք, որ Թուրքահայաստանում ներկայումս հավանաբար առկա է 270,000 հայ: Դրանցից 75,000–ը հայրենադարձվել են Սիրիայի և Միջագետքի կողմերից, այլք դանդաղորեն վերադառնում են այլ տարածքներից, և մնացածները տարբեր պատճառներով մնացել էին երկրում (վերջին խումբ ներառվել են իսլամաց(վ)ած հայերը – Ռ.Թ.): Անդրկովկասում ամենայն հավանականությամբ կա 300,000 փախստական Թուրքահայաստանից, և մի քանի հազարից ավելի՝ այլ երկրներում, քանի որ նրանք ցրվել են Մերձավոր Արևելքի բոլոր կողմերում»¹⁰⁵:

¹⁰¹ Դրա մասին տե՛ս մանրամասն՝ Թաթոյան Ռ., *նշվ. աշխ.*, էջ 121-165:

¹⁰² Տե՛ս *Conditions in the Near East. Report of the American military mission to Armenia*, by Maj. Gen. James G. Harbord, U.S. Army. (Appendix only), Washington, Govt. printing office, 1920, էջ 7:

¹⁰³ Նույն տեղում:

¹⁰⁴ Նույն տեղում:

¹⁰⁵ Նույն տեղում, էջ 8:

Զեկուցագրի վերջում աղյուսակների տեսքով ներկայացվում էին մի քանի վիճակագրական տվյալներ «Եվրոպական Թուրքիայի, Փոքր Ասիայի և Անդրկովկասի» բնակչության և ռեսուրսների վերաբերյալ. նշվածից հարցի տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում պատերազմից առաջ և հետո «Թուրքահայաստանի» բնակչության ընդհանուր թվաքանակի վերաբերյալ տվյալները, որոնք զետեղում ենք ստորև¹⁰⁶.

Աղյուսակ 5.

Թուրքահայաստան					
Նահանգ, գավառ, գավառակ	Տարածություն, քառ. կմ	Ներկայումս		Նախքան պատերազմը	
		Բնակչություն, հազ.	Խտություն, քառ. կմ	Բնակչություն, հազ.	Խտություն, քառ. կմ
Արևելյան Սեբաստիա (ներառյալ Շապիմ-Գարահիսարի գավառ)	38.6	319	8	507	14
Ադանայի նահանգ	25.1	193	8	320	13
Մարաշի գավառ և Այնթապի գավառակ	16.0	102	6	170	11
Խարբերդի նահանգ	32.9	282	9	450	14
Դիարբեքիրի նահանգ (հյուսիսային հատված)	16.1	186	12	296	18
Բիթլիսի նահանգ (առանց Սղերդի գավառի)	19.7	229	12	382	19
Վանի նահանգ (առանց Չաքյարիի գավառի)	21.0	204	10	350	17
Էրզրումի նահանգ	49.7	398	8	630	13
Տրապիզոնի նահանգ	32.5	685	21	1,000	31
Ընդամենը	249.8	2,598	10	4,105	16.4

Արևմտահայության թվաքանակի վերաբերյալ ԱՄՆ-ի պաշտոնական տեսակետի ուսումնասիրության առումով հանրագումարային փաստաթուղթ կարելի է համարել Հայաստան- Թուրքիա սահմանի վերաբերյալ ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի իրավարար վճռին (1920 թ. նոյեմբերի 22) կից զեկուցագիրը, որը կազմվել էր հատուկ այդ նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից (տե՛ս Full Report of the Committee upon the Arbitration of the Boundary between Turkey

¹⁰⁶ Նույն տեղում, էջ 41-42:

and Armenia)¹⁰⁷: Համաձայն զեկուցագրի հեղինակների՝ Հայաստանի և Թուրքիայի միջև սահմանի որոշման հարցում նրանք առաջնորդվել են երեք նկատառումներով, որոնցից մեկը ազգագրական էր (մյուս երկուսը ռազմավարական և տնտեսական նկատառումներն էին)¹⁰⁸: Զեկուցագրում նշվում էր, որ Արևմտյան Հայաստանի բնակչությունը կազմող ազգագրական տարրերի ուսումնասիրությունը բավականին մշտապատ գործ է, որը պայմանավորված է Արևմտյան Հայաստանի սահանգների՝ պատերազմի նախօրյակին վերաբերող հավաստի վիճակագրության բացակայությամբ, հայերի տեղահանություններով և կոտորածներով, թուրք և քուրդ բնակչության կորուստներով¹⁰⁹:

Զեկուցագրի հեղինակները Մեծ եղեռնի նախօրյակին Արևմտյան Հայաստանի բնակչության իրենց հաշվարկներում նույնպես հիմնվում էին պրոֆեսոր Մաժիի «Ասիական Թուրքիայի ազգաբնակչությունը» վերը հիշատակված տեղեկագրի վրա, որը շրջանառության մեջ էր դրվել Փարիզի խաղաղության կոնֆերանսին ամերիկյան պատվիրակության կողմից: Հենց վերոնշյալ տեղեկագրից քաղված տվյալներով հիմնավորվում էր ապագա Հայաստանի սահմանների մեջ Վանի սահանգի Հաքյարիի և Բիթլիսի սահանգի Սղերդի գավառների չներառելը (նշենք, որ նշված շրջանների համար հայկական կողմը որևէ հավակնություն չէր ներկայացնում): Ուշագրավ է զեկուցագրում նշված գավառների համար տրված վիճակագրությունը, որը հայերի թվաքանակին վերաբերող մասով մոտ է կամ նույնիսկ առավել է Հայոց պատրիարքարանի տվյալներից¹¹⁰:

Աղյուսակ 6.

	Թուրքեր	Քրդեր	Հայեր	Նեստորական քրիստոնյաներ (ասորիներ)
Հաքյարի	10,000 (4,15%)	130,000 (54,4%)	10,000 (4,15%) ¹¹¹	85,000 (35,9%)
Սղերդ	66,000 (65,3%)		26,000 (25,7%) ¹¹²	-

Եթե Սղերդի և Հաքյարիի գավառները Հայաստանի սահմաններից դուրս թողնելը զեկուցագրի հեղինակները պայմանավորում էին ազգագրական նկատառումներով, ապա Տրապիզոնի սահանգի մի մասը Հայաստանին միացնելը պայ-

¹⁰⁷ Տե՛ս *Arbitral award of the president of the United States of America Woodrow Wilson: full report of the committee upon the arbitration of the boundary between Turkey and Armenia. Washington, November 22nd, 1920*, Prepared with an introduction Ara Papian, Yerevan, «Asoghik», 2011:

¹⁰⁸ Նույն տեղում, էջ 15:

¹⁰⁹ Նույն տեղում, էջ 16:

¹¹⁰ Նույն տեղում, էջ 18:

¹¹¹ Ըստ Հայոց պատրիարքարանի՝ 1912 թ. տվյալների՝ 12,000 (տե՛ս Թեոդիկ, *Ամէսուն ցարեցոյցը...*, էջ 262):

¹¹² Ըստ Հայոց պատրիարքարանի՝ 1912 թ. տվյալների՝ 18,000 (տե՛ս նույն տեղում):

մանավորված էր «բացարձակ և վճռորոշ» տնտեսական նկատառումներով, այն է՝ Հայաստանի՝ դեպի ծով ելք ունենալու հրամայականով: Ըստ զեկուցագրի հեղինակների՝ նշված նահանգում «մահմեդականներն ու հույները այնքան են թվապես գերակշռում հայերին, որ Հայաստանը չի կարող ներկայացնել ազգագրական հավակնություն վիլայեթի որևէ հատվածի նկատմամբ»¹¹³:

5. Մեծ Բրիտանիայի փորձագետների անդրադարձները արևմտահայության թվաքանակի հարցին

Հայաստանի սահմանների և դրա հետ կապված Արևմտյան Հայաստանի վեց նահանգների բնակչության էթնիկ խմբերի տոկոսային հարաբերակցության ուշագրավ դիտարկում է պարունակում Մեծ Բրիտանիայի արտգործնախարարի տեղակալ Ռոբերտ Մեսիլի կողմից 1918 թ. դեկտեմբերին կառավարության նիստերից մեկի ընթացքում արված հայտարարությունը, որի համաձայն վեց նահանգներում նախքան պատերազմը բնակչության 35 տոկոսը կազմում էին հայերը, 25 տոկոսը՝ թուրքերը, 20 տոկոսը՝ քրդերը, իսկ մնացած 20 տոկոսը՝ այլ քրիստոնյա հարանվանությունների և «հեթանոս» կրոնների ներկայացուցիչները¹¹⁴: Այս տվյալները մոտավորապես համապատասխանում էին Հայոց պատրիարքարանի և հայկական պատվիրակության ներկայացրած թվերին:

1917 թ. գարնանը Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը հաշտության կոնֆերանսին նախապատրաստվելու աշխատանքների շրջանակում ստեղծեց հատուկ բաժին, որի պարտականությունը պետք է լիներ կոնֆերանսի բրիտանացի պատվիրակներին տեղեկատվություն տալ՝ կապված խնդրո առարկա տարբեր երկրների աշխարհագրության, տնտեսության, պատմության, սոցիալական, կրոնական և քաղաքական ոլորտների հետ: Բաժնի պատրաստած բազմաթիվ տեղեկագրերից մեկը վերաբերում է Արևմտյան Հայաստանին՝ կրելով «Հայաստան և Քուրդիստան» վերնագիրը¹¹⁵: Տեղեկագրի՝ «Բնակչություն» ենթաբաժինը վիճակագրական տվյալներ է պարունակում Մեծ եղեռնի նախօրյակին Արևմտյան Հայաստանի բնակչության թվաքանակի վերաբերյալ:

Տեղեկագրի հեղինակները նախ նշում են, որ ներկայացվող տվյալները քաղված են նախապատերազմական տարբեր վիճակագրություններից և պետք է ընկալվեն որպես մոտավոր, ինչ աղբյուրից էլ դրանք վերցված լինեն: Այնուհետև տեղեկագրում ներկայացվում էր Հայաստանի և «Քուրդիստանի» նահանգների ընդհանուր բնակչությունը՝ համաձայն թուրքական վիճակագրության և առանձին Թուրքիայի վեց հայկական նահանգների՝ Հայոց պատրիարքարանի՝ 1912 թ. վիճակագրությունը (տե՛ս Աղյուսակ 1), ինչպես նաև Կիլիկիայի հայ բնակչության վիճակագրությունն ըստ թեմերի՝ կազմված և հրատարակված 1913 թ. Սսի կաթողիկոսության կողմից (տե՛ս ստորև):

¹¹³ Նույն տեղում:

¹¹⁴ St' u Nassibian Akaby, *Britain and the Armenian Question, 1915-1923*, New York, St. Martin's Press, 1984, էջ 145:

¹¹⁵ St' u Armenia and Kurdistan, London, H.M. Stationery Office, 1920:

Կիլիկիայի հայ բնակչության վիճակագրությունը¹¹⁶

	Հայ բնակչություն
Սիս	9500
Ադանա	37900
Հաճրն	21200
Պայաս	11000
Բերիա (Հալեպ)	22,000
Գերմանիկե (Մարաշ)	37,500
Ուլնիա (Ջեյթուն)	21,000
Ֆրոնուզ	7,016
Այնթապ	35,000
Անտիոք (Անթակիա)	15,500
Մելիտենե (Մալաթիա)	23,000
Յոզղաթ	41,000
Գյուրուն (Կյուրին)	18,500
Տիվրիկ	11,300
Տարենտե	7,000
Ընդամենը	318,416¹¹⁷

Բավականին ուշագրավ է տեղեկագրի հեղինակների հետևյալ դիտարկումը. «Հավանական է, որ հայերին վերաբերող թվերը իրականից խիստ ցածր են և ոչ թե բարձր, քանի որ գլխահարկի գոյությունը ստիպում էր հայերին թաքցնել, այլ ոչ թե ուռճացնել սեփական թվաքանակը»¹¹⁸: Այս փաստարկը նախկինում բազմիցս արձանագրվում էր հարցին ծանոթ բոլոր անկողմնակալ ուսումնասիրողների կողմից:

Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությունը չսահմանափակվեց միայն Առաջին աշխարհամարտի նախօրյակին Արևմտյան Հայաստանի և Օսմանյան կայսրության այլ տարածքների ազգաբնակչության վերաբերյալ տարբեր աղբյուրների վիճակագրական տվյալների հավաքմամբ, այլ նաև փորձ արեց դրանց հիման վրա սեփական վիճակագրություն կազմելու: Նման վիճակագրության նմուշ է

¹¹⁶ Նույն տեղում, էջ 7:

¹¹⁷ Արժանահիշատակ է, որ Կիլիկիայի հայ բնակչության վիճակագրությունը ներկայացնող հանրագումար այս թվի տակ տեղեկագրի հեղինակները ծանոթագրությամբ նշում են, որ, ըստ թուրքական վիճակագրության, տվյալ շրջանների համար ամբողջ բնակչության թիվը 422,400 է՝ դրանով անուղղակի կասկածի տակ առնելով հայկական վիճակագրության հավաստիությունը: Մինչդեռ իրականում թուրքական տվյալն արտացոլում է միայն Ադանայի վիլայեթի բնակչության թիվը, իսկ հայկական վիճակագրության մեջ ընդգրկված շրջանները վարչական առումով պատկանում էին նաև Հալեպի (Բերիա (Հալեպ), Մարաշ, Ջեյթուն, Ֆրոնուզ, Այնթապ, Անտիոք (Անթակիա), Խարբերդի (Մալաթիա) և Սեբաստիայի (Տարենտե, Տիվրիկ) նահանգներին. զուտ Ադանայի նահանգի հայ բնակչության թիվը, ըստ հայկական վերոնշյալ վիճակագրության, 79,600 էր:

¹¹⁸ Նույն տեղում, էջ 6:

1919 թ. դեկտեմբերին Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության Աշխարհագրական բաժնի պատրաստած վիճակագրական աղյուսակը: Աղյուսակի համար որպես տվյալների աղբյուր ծառայեցին 1914 թ. օսմանյան պաշտոնական վիճակագրությունը, հունական և հայկական եկեղեցական աղբյուրների տրամադրած տվյալները և հատկապես արդեն հիշատակված ամերիկյան փորձագիտական խմբի Արևմտյան Ասիայի բաժնի փորձագետ պրոֆեսոր Դ. Մաժիի պատրաստած «Ասիական Թուրքիայի բնակչությունը պատերազմի նախօրյակին» տեղեկագիրը¹¹⁹: Համաձայն փաստաթղթի տվյալների՝ 1914 թ. Օսմանյան կայսրության տարածքում, բացառությամբ մայրաքաղաք Կ. Պոլսի, բնակվում էր 1,604,000 հայ (հայերի և մահմեդականների բաշխումն ըստ Արևմտյան Հայաստանի նահանգների տե՛ս Աղյուսակ 7 և 8)¹²⁰:

6. Օսմանյան, հայկական և արևմտյան (անգլո-ամերիկյան) վիճակագրական տվյալների համադրումն ու վերլուծությունը

Արևմտյան Հայաստանի տարածքի համար Փարիզի վեհաժողովին ներկայացված օսմանյան, հայկական և արևմտյան (անգլո-ամերիկյան) վիճակագրական տվյալների համադրումն ու համեմատությունը (տե՛ս Աղյուսակներ 7 և 8) փաստում է, որ տվյալ տարածքի հայ բնակչության պարագայում հայկական տվյալները (1,415,000 շունչ) մոտ 83%-ով բարձր են օսմանյան (772,662 շունչ) և մոտ 18%-ով՝ անգլո-ամերիկյան փորձագետների տվյալներից (1,155,000 շունչ): Իրենց հերթին անգլո-ամերիկյան փորձագետների՝ արևմտահայությանը վերաբերող տվյալները մոտ 50%-ով բարձր են օսմանյան և մոտ 18%-ով ցածր հայկական տվյալներից. Արևմտյան Հայաստանի մուսուլման բնակչության պարագայում (տե՛ս Աղյուսակ 8) օսմանյան տվյալները (4,722,517 շունչ) մոտ 188%-ով բարձր են հայկական (1,635,000 շունչ) և մոտ 18%-ով՝ անգլո-ամերիկյան փորձագետների վիճակագրական տվյալներից (4,001,000 շունչ):

Վերոնշյալը վկայում է այն մասին, որ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դիվանագետները և փորձագետները հետպատերազմյան կարգավորման շրջանակներում Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ժողովրդագրական կազմի վերաբերյալ իրենց հայտարարություններում և գնահատականներում հենվում էին կամ հայկական տվյալների վրա, կամ սեփական հաշվարկների: Արևմտահայության թվաքանակի պարագայում օսմանյան տվյալների իսկությունը մերժվում էր, նախապատվությունը տրվում էր հայկական կամ դրանց հիման վրա կատարված սեփական հաշվարկներին, որոնք էականորեն բարձր էին օսմանյան տվյալներից: Մուսուլման ազգաբնակչության պարագայում անգլո-ամերիկյան փորձագետները օգտագործում էին օսմանյան կառավարության տվյալները՝ որոշակի շտկելով դրանք դեպի նվազեցում:

¹¹⁹ St' u Zamir Meir, *Population Statistics of the Ottoman Empire in 1914 and 1919...*, էջ 87:

¹²⁰ Նույն տեղում, էջ 106:

ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան թեև ընդունում էին օսմանյան վիճակագրության կեղծ բնույթը և արևմտահայության թվաքանակի մասով՝ հայկական ծագում ունեցող տվյալների արժանահավատությունը, սակայն պարտված սուլթանական Թուրքիայի հետ հաշտություն կնքելու համատեքստում հայկական պահանջատիրությունը չափավորելու համար նրանք հաճախ շեշտում էին արևմտահայերի՝ Մեծ եղեռնի նախօրյակին տոկոսային հարաբերակցությամբ մահմեդականներին զիջելու փաստարկը¹²¹:

Եզրափակելով նշենք, որ մեր կարծիքով արևմտահայության թվաքանակի վերաբերյալ վերոնշյալ բոլոր երեք աղբյուրներից ծագող տվյալներն առավել կամ նվազ չափով ցածր են իրական պատկերից: Դրա մասին է վկայում Մեծ եղեռնի նախօրյակին վերաբերող հայկական այլ սկզբնաղբյուրների տվյալների առկայությունը («ամբաստանագիր-տեղեկագրեր», հայ գաղթականների հաշվառման և հարցման տվյալներ, Մեծ եղեռնը վերապրածների՝ իրենց հայրենի բնակավայրերի մասին հաղորդվող տեղեկություններ), որոնք իրարից անկախ շատ դեպքերում օսմանյան կառավարության և անգամ Կ. Պոլսի Հայոց պատրիարքարանի տվյալների համեմատ հայ բնակչության համար ավելի բարձր թվեր են հաղորդում տվյալ բնակավայրի և վարչական միավորի համար¹²²: Դրա հետ մեկտեղ, 1919-1920 թթ. հարցի արծարծման արդյունքում հրապարակ հանված բավականին հարուստ, թեև հակասական վիճակագրական նյութը քննադատական մոտեցում ցուցաբերելու և այլ աղբյուրների նյութերի հետ համադրելու դեպքում հնարավոր է օգտագործել Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի բարդ և խճճված հարցն ուսումնասիրելու և մասնավորապես, ըստ Օսմանյան կայսրության վարչական միավորների, հայերի թիվը ճշտելու համար:

¹²¹ Հետաքրքիր է, որ հետագայում՝ քեմալականների արձանագրած հաղթանակներից հետո, Սևրի պայմանագրի վերանայման և նոր՝ քեմալական Թուրքիայի հետ խաղաղություն հաստատելու նպատակով 1922 թ. նոյեմբերին հրավիրված Լոզանի խորհրդածողովի ժամանակ Մեծ Բրիտանիայի դիվանագիտությունը դիմում էր հակառակ հնարի՝ արդեն թուրքերից զիջումներ կորզելու նպատակով: Այսպես, նիստերից մեկի ժամանակ Մեծ Բրիտանիայի պատվիրակության ղեկավար, արտգործնախարար լորդ Քլոքընը հռետորական հարցերի շարան էր ուղղում թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ Ինյոնյուին. «Ինչպե՞ս եղավ, որ Փոքր Ասիայում նախկինում բնակվող 3,000,000 հայերի թիվը նվազեց 130,000-ի: Արդյո՞ք նրանք ինքնասպան եղան կամ արդյո՞ք կամովին հեռացան: Ինչո՞ւ են հարյուր հազարավոր հայեր փախստականներ դարձել՝ ապաստանելով աշխարհի բոլոր երկրներում: Ինչո՞ւ է Հայկական հարցը աշխարհի մեծագույն ամոթներից մեկը» (տե՛ս Nassibian Akaby, *նշվ. աշխ.*, էջ 145):

¹²² Դրա մասին մանրամասն տե՛ս Թաթոյան Ռ., *նշվ. աշխ.*, էջ 100-114:

Աղյուսակ 7. Մեծ եղեռնի նախօրյակին Արևմտյան Հայաստանի նահանգների հայ բնակչությունը՝ համաձայն Փարիզի վեհաժողովին ներկայացված տարբեր վիճակագրական տվյալների

Վարչական միավոր	Օսմանյան կառավարություն	Միացյալ հայկական պատվիրակություն ¹²³	Տեղեկատու փորձագիտական խումբ (ԱՄՆ) - Մեծ Բրիտանիայի արտգործնախարարության աշխարհագրական բաժին
Արևմտյան Հայաստան			
Վանի նահանգ	67,792	197,000	190,000
Բիթլիսի նահանգ	119,132	198,000	185,000
Էրզրումի նահանգ	136,618	215,000	205,000
Դիարբեքիրի նահանգ	73,226	124,000	82,000
Խարբերդի նահանգ	87,864	204,000	130,000
Սեբաստիայի նահանգ	151,674	225,000	200,000
Ընդամենը վեց նահանգներ	636,306	1,163,000	992,000
Տրապիզոնի նահանգ	40,237	65,000	33,000
Ընդամենը (մերառյալ Տրապիզոնի նահանգ)	676,543	1,228,000	1,025,000
Կիլիկիա			
Ադանայի նահանգ	57,686	118,000	75,000
Մարաշի գավառ	38,433	69,000 ¹²⁴	55,000
Ընդամենը	96,119	187,000	130,000
Ընդհանուր գումար	772,662	1,415,000	1,155,000

¹²³ Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, ԺԶ տարի, 1922, Կ. Պոլիս, տպագրություն «Մ. Յովակիմեան», 1922, էջ 262:

¹²⁴ Մարաշ, Զեյթուն, Ֆոնուզ:

Աղյուսակ 8. Մեծ եղեռնի նախօրյակին Արևմտյան Հայաստանի նահանգների մահմեդական բնակչությունը՝ համաձայն Փարիզի վեհաժողովին ներկայացված տարրեր վիճակագրական տվյալների

Վարչական միավոր	Օսմանյան կառավարություն	Միացյալ հայկական պատվիրակություն ¹²⁵	Տեղեկատու փորձագիտական խումբ (ԱՄՆ) - Մեծ Բրիտանիայի արտոգործնախարարության աշխարհագրական բաժին
Արևմտյան Հայաստան			
Վանի նահանգ	179,380	122,000 ¹²⁶	259,000 ¹²⁷
Բիթլիսի նահանգ	309,999	127,000 ¹²⁸	261,000 ¹²⁹
Երզրումի նահանգ	673,297	345,000	540,000 ¹³⁰
Դիարբեքիրի նահանգ	492,101	100,000 ¹³¹	400,000 ¹³²
Խարբերդի նահանգ	446,379	197,000 ¹³³	280,000 ¹³⁴
Սեբաստիայի նահանգ	939,735	287,000 ¹³⁵	977,000
Ընդամենը վեց նահանգներ	3,040,891	1,178,000	2,717,000
Տրապիզոնի նահանգ	1,187,078	301,000 ¹³⁶	848,000
Ընդամենը վեց նահանգներ և Տրապիզոնի նահանգ	4,227,969	1,479,000	3,565,000
Կիլիկիա			
Ադանայի նահանգ	341,903	-	290,000
Մարաշի գավառ	152,645	-	146,000 ¹³⁷
Ընդամենը	494,548	156,000¹³⁸	436,000
Ընդհանուր գումար	4,722,517	1,635,000¹³⁹	4,001,000

¹²⁵ Բացառությամբ ղզլբաշների, գազանների, չարքլիների և եզդիների:

¹²⁶ Առանց Հաքյարիի սանջակի:

¹²⁷ Այդ թվում՝ 57,000 թուրք և 202,000 քուրդ:

¹²⁸ Առանց Մղերդի սանջակի:

¹²⁹ Այդ թվում՝ 60,000 թուրք և 201,000 քուրդ:

¹³⁰ Այդ թվում՝ 335,000 թուրք և 205,000 քուրդ:

¹³¹ Առանց Մարդինի սանջակի, Բշերիկի գավառակի և Սևերեկի:

¹³² Այդ թվում՝ 100,000 թուրք, 230,000 քուրդ և 70,000 մահմեդական արաբ:

¹³³ Առանց Մալաթիայի գավառի:

¹³⁴ Այդ թվում՝ 250,000 թուրք և 230,000 քուրդ:

¹³⁵ Միայն Սեբաստիայի և Շապին-Գարահիսարի գավառները:

¹³⁶ Բացառությամբ Սամսունի սանջակի:

¹³⁷ Այդ թվում՝ 82,000 թուրք, 56,000 քուրդ և 8,000 մահմեդական արաբ:

¹³⁸ Մարաշի, Խոզանի և Ջերեկ Բերեքեթի սանջակները:

¹³⁹ Հանրագումար թիվն ըստ Փարիզի հաշտության վեհաժողովին Հայկական պատվիրակության ներկայացրած հուշագրի տվյալի (տե՛ս Հայկական հարցը հաշտութեան կոնֆերանսի առաջ..., էջ 32):

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԵՎ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՀԱՐՅԵՐԸ ՓԱՐԻՉԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ
ԿՈՆՖԵՐԱՆՍԻՆ (1919-1920 ԹԹ.)

Ռոբերտ Թատոյան

ԱՄՓՈՓՈՒՄ

Առաջին աշխարհամարտից հետո Օսմանյան կայսրության հետ հաշտության պայմանագրի մշակման և Հայաստանի սահմանների որոշման հետ կապված գործընթացների համատեքստում ուրույն տեղ են գրավում Մեծ եղեռնի նախօրյակին արևմտահայության թվաքանակի և Արևմտյան Հայաստանում հայերի՝ այլ էթնիկական խմբերի նկատմամբ հարաբերակցության հարցերի արծարծումները: Տվյալ հարցերին անդրադարձել են և հայկական պաշտոնական ու ոչ պաշտոնական տարբեր կառույցները, և՛ թուրքական իշխանությունները, և՛ Անտանտի պետությունները (դրանցից հատկապես Ամերիկայի Միացյալ Նահանգները և Մեծ Բրիտանիան):

Արևմտյան Հայաստանի տարածքի համար («վեց նահանգներ», Տրապիզոն, Կիլիկիա) Փարիզի վեհաժողովին ներկայացված օսմանյան, հայկական և անգլո-ամերիկյան վիճակագրական տվյալների (համապատասխանաբար՝ 1,415,000 շունչ, 772,662 շունչ և 1,155,000 շունչ) համադրումն ու համեմատությունը փաստում են, որ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դիվանագետները և փորձագետները հետպատերազմյան կարգավորման շրջանակներում Արևմտյան Հայաստանի ազգաբնակչության ժողովրդագրական կազմի վերաբերյալ իրենց գնահատականներում հենվում էին հիմնականում հայկական տվյալների և սեփական հաշվարկների վրա: Ամերիկացի և բրիտանացի փորձագետները գործնականում չեն օգտագործել օսմանյան տվյալները Արևմտահայության թվաքանակը որոշելու համար:

Բանալի բաներ՝ վիճակագրություն, արևմտահայության թվաքանակ, Օսմանյան կայսրության ժողովրդագրություն, Փարիզի հաշտության կոնֆերանս, Հայկական հարց, Հայոց ցեղասպանություն:

THE QUESTIONS OF NUMBER OF WESTERN ARMENIANS AND ETHNIC
COMPOSITION OF POPULATION OF WESTERN ARMENIA AT THE PARIS PEACE
CONFERENCE IN 1919-1920

Robert Tatoyan

SUMMARY

After World War One questions related to ethno-demographic composition of Western Armenia's population together with the issues of compensation for losses suffered by the Armenian people as a result of the genocide and definition of the future borders of independent Armenia were put on the agenda of the Paris Peace Conference in the context of preparation of peace treaty with the defeated Ottoman Empire. Various

Armenian official and unofficial organizations, as well as Turkish authorities and Allies addressed these questions.

Comparison and analysis of the Armenian, Ottoman and British-US statistics on Western Armenia (“six vilayets,” Trebizond, Cilicia) presented at the Paris Peace Conference demonstrates that US and British experts and diplomats relied mainly on the Armenian sources and calculations of the number of Western Armenians in defining ethno-demographic composition of Western Armenia’s population in the framework of the post-war settlement. US and British experts and diplomats didn’t use the Ottoman statistics in determining the size of the Western Armenian population.

Keywords: statistics, Western Armenians’ population figure, Ottoman demography, Paris Peace Conference, Armenian question, Armenian Genocide.

ВОПРОСЫ ЧИСЛЕННОСТИ ЗАПАДНЫХ АРМЯН И ЭТНИЧЕСКОГО СОСТАВА НАСЕЛЕНИЯ ЗАПАДНОЙ АРМЕНИИ НА ПАРИЖСКОЙ МИРНОЙ КОНФЕРЕНЦИИ (1919-1920 ГГ.)

Роберт Татоян

РЕЗЮМЕ

После Первой мировой войны вопросы этнодемографического состава населения Западной Армении стали предметом повестки дня на Парижской мирной конференции в контексте процессов вокруг подготовки мирного договора с побежденной Османской империей, возмещения потерь понесенных армянским народом в результате геноцида, определения будущих границ независимой Армении. К данным вопросам обращались и различные армянские официальные и неофициальные структуры, и турецкие власти, и страны Антанты.

Сопоставление и анализ армянских, турецких и англо-американских статистических данных по Западной Армении («шесть вилайетов», Трапезунд, Киликия), представленных на Парижской мирной конференции, (соответственно, армян – 1,415,000 чел., 772,662 чел., 1,155,000 чел; мусульман – 1,635,000 чел, 4,722,517 чел, 4,001,000 чел), свидетельствует о том, что дипломаты и эксперты США и Великобритании при определении этнодемографического состава населения Западной Армении в рамках послевоенного урегулирования опирались главным образом на армянские данные и на собственные выкладки. Для определения численности западноармянского населения данные османской статистики британскими и американскими экспертами и дипломатами практически не использовались.

Ключевые слова: статистика, численность западных армян, демография Османской империи, Парижская мирная конференция, Армянский вопрос, Геноцид армян.